«NEW GENERATION»
Humanitarian Non-Governmental Organization

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԼԳԲՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐԸ

Փաստաթղթերը վերլուծվել են
2012 թ. օգոստոսի 25-ից մինչ
սեպտեմբերի 30-ը

Երևան, Հայաստան
2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սեղմնագիր	4
Ներածություն	5
Հիմնախնդրի նկարագրությունը	5
Հետազոտության նպատակը և խնդիրները	7
Մեթոդաբանությունը	7
Հետազոտության արդյունքները	8
ԼԳԲՏ եզրույթների սահմանման խնդիրը և վիճակագրական պատկերը	8
Նույնասեռականներ և նույնասեռականություն. սոցիալական պատկերացումները, կարծրատիպերը և ընդհանուր վերաբերմունքը ՀՀ տարածքում	11
«Պինցետ» ռոք խմբի այցը Թուրքիա և DIY փաբի հրդեհման փորձը. սոցիալական ընկալումների առանձնահատկությունները	26
Բազմազանության երթը և դրան հաջորդած իրադարձությունների սոցիալական ընկալումների առանձնահատկությունները	34
Եզրակացություն	39
Առաջարկություններ	41

Հիմնական հասկացություններ

ԼԳԲՏ	Լեսբուհի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր
ՏՍՏ	Տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդիկ
ՄԱԿ	Մավորված Ազգերի Կազմակերպություն
ՁԻԱՀ	Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԵԽ	Եվրախորհուրդ
ԵԱՀԿ	Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպություն
ԵՄ	Եվրամիություն
ԱԺ	Ազգային Ժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿ	Հասարակական Կազմակերպություն
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԼԳԵՓ	Լեսբի, Գեյ, Երկսեռական, Փոխգենդեր
ՀՅԴ	Հայ Յեղափոխական Դաշնակցություն
ՀՀԿ	Հայաստանի Հանրապետական Կուսակցություն
ՀՀԼԱ	Հայ Հոմոսեքսուալների և Լեսբուհիների Ասոցիացիա
ՀԱՄ	Հայ Արիական Միաբանություն

Սեղմնագիր

Սույն հետազոտության իրականացման հիմնական նպատակն է պարզել համացանցային տարածությունում գեյ, լեսբուհի, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց, նրանց սեռական կողմնորոշման վերաբերյալ ձևավորված սոցիալական պատկերացումները, տպավորությունները, ինչպես նաև կարծրատիպերը: Հետազոտության շրջանակներում սոցիոլոգիական մեթոդներից նպատակահարմար է կիրառել էլեկտրոնային փաստաթղթերի ավանդական (կամ դասական) վերլուծման մեթոդը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնախնդրի նկարագրությունը

ԼԳԲՏ (լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) անձինք կազմում են ցանկացած հասարակության բաղկացուցիչ մասը, սակայն տարբեր հասարակություններում նրանց վերաբերյալ ձևավորված պատկերացումները, համոզմունքները, կարծրատիպերը ու համապատասխանաբար վերաբերմունքը տարբեր է: Հայաստանի գերակայող մշակույթի շրջանակներում ԼԳԲՏ անձինք խոցելի խումբ են, քանզի ժամանակ առ ժամանակ տարբեր պետական և ոչ պետական կառույցների, ֆորմալ և ոչ ֆորմալ, պետական և ոչ պետական կարգավիճակներ զբաղեցնող որոշ սուբյեկտների կողմից խախտվում են նրանց իրավունքները:

Վերջին ժամանակներս ՄԱԿ-ի տարբեր կառույցներ բազմիցս կոչ են արել անդամ պետություններին երաշխավորելու, որ իրենց ներպետական իրավական ակտերն ապահովում են խտրականության արգելումը կախված սեռից, սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից[1]:

Չնայած նրան, որ Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է ՄԱԿ-ի, ԵԽ-ի, ԵԱՀԿ-ի և ԵՄ-ի մի շարք դաշնագրեր, պայմանագրեր և իրավական այլ փաստաթղթեր, առ այսօր Հայաստանի գեյ, լեսբուհի, բիսեքսուալ և տրանսգենդեր անձինք առօրյա կյանքում հաճախ հանդիպում են հավասարության խախտման դեպքերի՝ պայմանավորված զուտ իրենց սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ: Խնդրի խորքային արմատները պետք է տեսնել նաև հայ հասարակության տիպաբանական առանձնահատկությունների, ժողովրդական իրավական գիտակցության պակասի, ավանդականից շեղվելու ցանկացած փորձին սվիններով արձագանքելու բնորոշ յուրահատկության մեջ:

Հարկավոր է նշել, որ 2012թ. Հուլիս ամսին Ժնևում հինգ կազմակերպությունների կողմից ներկայացվել է Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների վերաբերյալ այլընտրանքային զեկույց: Այդ զեկույցը ներկայացվել է քննարկման Մարդու Իրավունքների Կոմիտեի 105-րդ նստաշրջանում[2]:

Ինֆորմացիոն հասարակության շրջանակներում ԼԳԲՏ անձանց սոցիալական ընկալման առանձնահատկությունները գլխավորապես պայմանավորված են ԶԼՄ-ի կողմից տրամադրվող ինֆորմացիայի բնույթով, որը ձևավորում է հասարակական տարբեր երևույթների, իրադարձությունների, այս կամ այն վիճակագրական կատեգորիայի կերպարը, իմիջը: Գաղտնիք չէ, որ օրեցօր

[1] Human Rights Violations of Lesbian, Gay, Bisexual, and Transgender (LGBT) People in Armenia: A Shadow Report, Submitted for consideration at the 105th Session of the Human Rights Committee, July 2012, Geneva, p. 4, http://www2.ohchr.org/english/bodies/hrc/docs/ngos/LGBT_Armenia_HRC105.pdf

[2] Տե՛ս Human Rights Violations of Lesbian, Gay, Bisexual, and Transgender (LGBT) People in Armenia: A Shadow Report, Submitted for consideration at the 105th Session of the Human Rights Committee, July 2012, http://www2.ohchr.org/english/bodies/hrc/docs/ngos/LGBT_Armenia_HRC105.pdf

ինֆորմացիայի տրամադրման հզոր գործիք է դառնում համացանցը, որը հավակնում է դառնալ հասարակության անդամների մոտ տեղեկատվության ստացման հիմնական միջոցը: Համապատասխանաբար, տրամաբանական է պարզել հայկական համացանցային տարածությունում գերիշխող տեղեկատվության բովանդակությունը՝ վերաբերող հետաքրքրող թեմային: Նման տեղեկատվության վերլուծումը, մեկնաբանումը թույլ կտա նախ պարզել ԼԳԲՏ անձանց վերաբերյալ առկա սոցիալական կարծիքները, պատկերացումները, այնուհետև մշակել առկա վիճակի փոփոխմանն ուղղված համապատասխան առաջարկություններ:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է պարզել ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիների և նրանց սեռական կողմնորոշման վերաբերյալ ընդհանուր վերաբերմունքը հայկական համացանցային տարածությունում:

Հետազոտության հիմնական նպատակին ի համապատասխան դրվել են հետևյալ **խնդիրները.**

- պարզել ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների և նրանց սեռական կողմնորոշման վերաբերյալ կիրառվող հիմնական եզրույթները ու դրանց կիրառման, սահմանման առանձնահատկությունները,
- հստակեցնել համացանցի աղբյուրներում ԼԳԲՏ անձանց վերաբերյալ առկա վիճակագրական ցուցանիշները,
- ճշգրտել էլեկտրոնային փաստաթղթերում ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների հանդեպ ձևավորված հիմնական սոցիալական պատկերացումները, համոզմունքները ու կարծրատիպերը,
- հստակեցնել ԼԳԲՏ անձանց վերաբերմունքը հայ հասարակության, վերջինիս որոշ սոցիալական խմբերի ու սոցիալական կատեգորիաների հանդեպ:

Հետազոտության մեթոդաբանությունը

Համացանցային իրականությունում կարելի էր գտնել բազմազան, բազմաբովանդակ էլեկտրոնային փաստաթղթեր լեսբուհիների, գեյերի, բիսեքսուալների, տրանսգենդերների և նրանց սեռական կողմնորոշման վերաբերյալ: Այդ փաստաթղթերն անհրաժեշտ էր ենթարկել խորը մտորման և մեկնաբանման: Համապատասխանաբար, նպատակահարմար էր կիրառել փաստաթղթերի ավանդական կամ դասական վերլուծումը: Ավանդական կամ դասական վերլուծման են ենթարկվել հիմնականում այն էլեկտրոնային փաստաթղթերը, որոնք ապահովել են մեծ քանակությամբ դիտումներ, դուր են եկել ընթերցողներին կամ դիտորդներին, համապատասխան նյութի վերաբերյալ այցելուների կողմից արվել են մեկնաբանություններ: Բացի այդ հաշվի են առնվել այնպիսի գործոններ, ինչպիսիք են փաստաթղթերի հրապարակման ամսաթիվը, փաստաթղթի ստեղծման դրդապատճառները, համատեքստը: Հիմնականում ընտրվել են վերջին երեք տարիների ընթացքում ստեղծված թարմ փաստաթղթերը:

Հարկ է նշել խոչընդոտների մասին՝ կապված հոդվածի հեղինակների վերաբերյալ կենսագրական տեղեկատվության որոնման հետ: Որոշակի դժվարություններ են ստեղծել նաև անանուն փաստաթղթերը: Նույնը վերաբերում է կայքերին, որոնց կողմից հետապնդվող շահերի, հետաքրքրությունների հստակեցումը երբեմն բարդ խնդիր էր:

Վերլուծման են ենթարկվել հետաքրքրող թեմայի վերաբերյալ ինտերնետում առկա շուրջ 34 հոդվածներ և 17 տեսանյութեր: Անհրաժեշտ է նաև նշել այն մասին, որ առանձին փաստաթղթերի հետ կապված դիտումների, www.facebook.com սոցիալական ցանցի միջոցով «Like»-երի, մեկնաբանությունների վերջնական քանակը դիտվել է **սեպտեմբերի 30-ին**, քանզի գաղտնիք չէ, որ անգամ մեկ օրվա ընթացքում պատկերը կարող է կրել փոփոխություն:

Հետազոտության արդյունքները

ԼԳԲՏ. եզրույթների սահմանման խնդիրը և վիճակագրական պատկերը

Հարկ է անդրադառնալ ԼԳԲՏ անձանց, նրանց սեռական կողմնորոշման վերաբերյալ հայկական իրականությունում կիրառվող հիմնական եզրույթներին ու դրանց տրվող սահմանումներին:

Առավել թարմ՝ 2012 թ. մայիսի 23-ին **PanARMENIAN.Net-ի** կայքում[3] տեղադրված է հոգեբույժ Սամվել Սուքիասյանի հայտարարությունը, որում ըստ նրա՝ «համասեռամոլությունը» միանշանակ հիվանդություն է, որն առաջանում է մարդու բնազդային համակարգի շեղումից:

ARMMEDICINE բժշկական հանրագիտարան անվանումն ունեցող կայքում[4] տրվում է «համասեռամոլություն» կամ «հոմոսեքսուալիզմ» հասկացությունների նման սահմանում. «Հոգեբանների պնդմամբ այս երևույթը որակվում է որպես հիվանդություն, որը պայմանավորված է վաղ տարիքում տեղի ունեցած շեղումներով: Այն բուժելի համարել չի կարելի, դրա համար նման մարդկանց պիտի ընդունել այնպիսին ինչպիսին նրանք կան: Այսօր Եվրոմիության ազդեցությունը զգալիորեն տարածական է նույնիսկ կարծրատիպային մենտալիտետ ունեցող երկրների վրա: Նրանք հասարակության մի մասնիկն են, և շատ հաճախ նրանց շարքերում կան այնպիսի բացառիկ ու տաղանդավոր անհատականություններ... »:

Սեքսոլոգների Հայկական Ասոցիացիայի պաշտոնական կայքում[5] հոմոսեքսուալիզմը սեքսուալ կողմնորոշման մի տարբերակ է, որի ժամանակ էմոցիոնալ և էրոտիկ կապվածություն է առաջանում նույն սեռի ներկայացուցչի նկատմամբ:

Այլ համացանցային աղբյուրում[6] հանդիպում ենք հոմոսեքսուալիզմի նմանատիպ սահմանման. «Մոտիվացիաների մակարդակում կամային ոլորտի հակումների և մոտիվների պերվերզիվ (սեռական հակման բավարարման աղավաղման ձև) խանգարման հիմնական տարբերակներից է՝ նորմալ սեռական կյանքի բացակայության պայմաններում: Նույն սեռի հանդեպ սեռական հակման դրսևորումն է, որը լիովին բավարարում է այդ անձի սեռական հակումները, այն կանանց մոտ կոչվում է լեսբիականություն, իսկ տղամարդկանց մոտ՝ արվամոլություն: Հոմոսեքսուալիզմը սեքսուալ կողմնորոշման մի տարբերակ է, որի ժամանակ էմոցիոնալ և էրոտիկ կապվածություն է առաջանում նույն սեռի ներկայացուցչի նկատմամբ»:

Վերոնշյալ նյութից կարելի է եզրակացնել հետևյալը.

- հիմնական հանդիպող տերմինը համասեռամոլությունն է կամ հոմոսեքսուալիզմը,
- առավել հաճախ համասեռամոլությունը կամ հոմոսեքսուալիզմը սահմանվում է որպես հիվանդություն:

Հայոց լեզվում գործածական է եղել «արվամոլություն» տերմինը, այժմ այն համարվում է վիրավորական և խտրական (քանի որ պարունակում է «մոլ» բացասական իմաստ

---

[3] Հոգեբույժ. Համասեռամոլությունը հիվանդություն է, ինտերնետային աղբյուր՝ http://www.panarmenian.net/arm/news/108853

[4] Առավել մանրամասն տե՛ս http://www.armmedicine.com/

[5] Առավել մանրամասն տե՛ս http://www.sexology.am/index.php?option=com_content&view=article&id=1&Itemid=2&lang=am

[6] Առավել մանրամասն տե՛ս http://www.doctors.am/am/symptoms/%D5%80%D5%B8%D5%B4%D5%B8%D5%BD%D5%A5%D6%84%D5%BD%D5%B8%D6%82%D5%A1%D5%AC%D5%AB%D5%A6%D5%B4/4936

արտահայտող վերջածանցը, ինչպես՝ գինեմոլ, կնամոլ, մանկամոլ, խաղամոլ, կրոնամոլ, նաև արդեն ոչ որպես վերջածանց՝ մոլեռանդ, մոլի, մոլագար և այլն), որի փոխարեն առաջադրվում են տարբեր նոր եզրույթներ՝ միասեռականություն, միասեռահակություն, նույնասեռականություն, նույնասեռահակություն և այլն: Առկա են նաև այլ եզրույթներ և գործածվող բառեր, որոնցից ոմանք առավել տարածված են, քան մյուսները՝ երկնագույն, այրասեր, արվագետ, իգացող (նույնասեռական կանանց նկատմամբ գործածվող տերմին), նաև միջազգային նոր և հնացած եզրույթներ՝ գեյ, լեսբի կամ լեսբուհի, ուրանիստ: Որոշ դեպքերում գործածվում են այլ եզրույթներ, հաճախ օտարալեզու՝ «գալուբոյ» (ռուսերեն голубой-երկնագույն բառից), <u>լեսբի</u> (գալիս է Լեսբոս կղզու անունից, ուր ապրել է անտիկ բանաստեղծուհի Սափոն, որ գովերգում էր սերը կանանց միջև), նաև վիրավորական բառեր, օրինակ գյոթ (թուրքական ծագումնաբանությամբ այս բառը բառացի նշանակում է «հետույք»), և այլն: Որոշ դեպքերում ոմանք գործածում են այլ եզրույթներ՝ կախված իրենց անձնական հայացքներից և վերաբերմունքից (դրական կամ բացասական) նույնասեռականության երևույթի և նման անհատների նկատմամբ՝ համասեռամոլ, նույնասեռամոլ, նույնիսկ համասեռամոլական, նույնասեռամոլական[7]:

Ինչ վերաբերում է եզրույթների սահմանմանը, ապա Ամերիկյան հոգեբուժական ասոցիացիան հոմոսեքսուալիզմը բացառել է հոգեկան հիվանդությունների ցանկից դեռևս 1973 թվականին, իսկ 1992 թ. հոմոսեքսուալիզմը Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ջնջվել է հիվանդությունների շարքից[8]: Հետևաբար նույնասեռականությունը որպես հիվանդություն սահմանելը ընդունելի չէ: Ավելին, «հոմոսեքսուալիզմի» փոխարեն ճիշտ է կիրառել «նույնասեռականություն» տերմինը: Հայկական ԶԼՄ-ում առ այսօր գերակայում են եզրույթներ, որոնց կիրառումն անընդունելի է և համապատասխանաբար կատարվում են սխալ արտահայտություններ, օրինակ՝ «բուժել համասեռամոլությունը», որում կարելի է համոզվել փաստաթղթերի բովանդակությունից:

Հասկանալի է, որ եզրույթների բազմազանությունը և սխալ կիրառումը պայմանավորված է ֆենոմենի մասին ոչ բավարար ինֆորմացիայի առկայությամբ և ոչ գրագետ ներկայացմամբ: Չպետք է մոռանալ նաև մշակույթի մասին, որը որոշիչ գործոն է, թե ինչպիսի եզրույթներ են կիրառում ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների հանդեպ կամ կիրառվելու դեպքում, որոնք կարող են լինել ընդունելի նրանց իսկ կողմից: Մյուս կողմից, նման եզրույթների բազմազանության առկայությունը դրական կարելի է գնահատել, քանզի դա ԼԳԲՏ անձանց հանդեպ ուշադրության, հետաքրքրության ցուցիչ է հայկական իրականությունում: Պարզապես ողջ խնդիրը նրանում է, որ այդ հետաքրքրությունը դրսևորվում է բևեռացված, դեպի ակնհայտորեն բացասականը միտված երանգի վրա, որը սկզբունքորեն հանգեցնում է դասական խտրականաության, հայկական իրականության շրջանակներում մարդկային իրավունքների ակնհայտ ոտնահարման: Վերջին հաշվով անկախ իրենց սեռական հայացքցերից այդ կատեգորիայի անձինք մարդիկ են, բանական

[7]Տե՛ս http://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%BD%D5%A5%D5%BC%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

8 Տե՛ս Гомосексуализм - это не болезнь, http://www.laitman.ru/muzhchiny/3876.html

էակներ, որոնք մարդկային վերաբերմունքի և իրենց հայացքների հարգման կարիք են զգում:

Ինչ վերաբերում է ՀՀ տարածքում ԼԳԲՏ անձանց վերաբերյալ համացանցային աղբյուրներում նշվող վիճակագրական տվյալներին, ապա 2009 թ. ապրիլի 14-ին ինտերնետում տեղադրված «Մարմնավաճառներ ու հոմոսեքսուալիստներ» հոդվածում[9] նշվում են կոնկրետ սոցիոլոգիական հետազոտության քանակական տվյալներ, որոնք վերցվել են «ՀՀ-ում մարմնավաճառների եւ տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդկանց խմբերի չափերի գնահատման Հաշվետվություն, 2008թ.»-ից: Ըստ հիշատակված հետազոտության արդյունքների՝ Գյումրի, Վանաձոր և Երևան քաղաքներում ՏՍՏ-ների խմբի հաշվարկային թվերը կազմել են.

- Երեւան՝ 7000-9000 մարդ (միջինում՝ 8000 մարդ),
- Վանաձոր՝ 190-220 մարդ (միջինում՝ 200 մարդ),
- Գյումրի՝ 80-230 մարդ (միջինում՝ 150 մարդ):

Ըստ այդմ, ՀՀ-ում այն տղամարդկանց հաշվարկային թիվը, ովքեր ունեցել են սեռական հարաբերություն տղամարդու հետ, կազմել է 12000-15000 (միջինում՝ 13500):

Պարզ է, որ չենք կարող ասել, որ 12000-15000-ը նունասեռականներ են, քանզի նրանց մի մասը կարող է պարզապես դրսևորել սեռական վարքագիծ: Նկատենք, որ նշված հոդվածի վերնագրում թույլատրված է տրամաբանական սխալ, որից կարելի է եզրակացնել, որ մարմնավաճառը չի կարող լինել նույնասեռական:

2010 թվականի հուլիսի 15-ին համացանցում տեղադրված «Հայ միասեռականները բախվում են անհանդուրժողականության և խտրականության» հոդվածում[10] նշվում է, որ Հայաստանում ԼԳԲՏ համայնքի վերաբերյալ հստակ տվյալներ չկան: Պաշտոնական վիճակագրական տվյալներ կան ընդամենը տղամարդկանց հետ հարաբերություն ունեցող կամ գոնե մեկ անգամ ունեցած տղամարդկանց թվի վերաբերյալ: ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տվյալներով Հայաստանում իրար հետ հարաբերվող 12 000 տղամարդ կա: Մոտավոր պատկեր կարելի է ստանալ նաև ՄԱԿ-ի աշխարհում ընդհանուր համարվող տվյալներով, որոնց համաձայն ամեն երկրում ԼԳԲՏ համայնքը կազմում է բնակչության թվի 4-7 տոկոսը:

[9] Տե՛ս http://www.f5blog.com/site/posts/414/
[10] Տե՛ս http://www.ireport.am/2010/07/armenian-gays-violence/

Նույնասեռականներ և նույնասեռականություն.
ընդհանուր վերաբերմունքը ՀՀ տարածքում

Առաջին հոդվածը, որը կենթարկվի մանրամասն վերլուծման հրապարակախոս Վ.Իշխանյանի կողմից գրված «Թաքուն կյանք. հայ միասեռականները երկար ճանապարհ պետք է անցնեն դեպի ազատություն» -ն էր, որի հակիրճ ռեզյումեն կներկայացվի ստորև.

Հոդվածի անվանումը	Թաքուն կյանք. հայ միասեռականները երկար ճանապարհ պետք է անցնեն դեպի ազատություն
Հոդվածի հեղինակը և հեղինակի դիրքը	Վահան Իշխանյան, գրող-հրապարակախոս
Հոդվածի հրապարակման ամսաթիվը	Օգոստոսի 7, 2009, 12:46
Դիտումների քանակը	3330
«Like» -երի քանակ www.facebook.com սոցիալական ցանցի միջոցով	8
Մեկնաբանությունների քանակը	14
Համացանցային հասցե	http://ankakh.com/2009/08/9806/
Լսարան(ֆորմալ կառույց)	Հատուկ Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտի համար (www.iwpr.net-ի)

Վերոնշյալ հոդվածի շրջանակներում նույնասեռականների հանդեպ կիրառվում են նման բառեր և բառախմբեր. «խաղալիք», «միասեռականի պիտակ», «գոմիկ», «միասեռական ընկերոջը», «իմ տղեն տենց չի կարա լինի», «իմ տղան գոմիկ լինի», «գեյ», «անսեռների մի գլխաքանակ», «գյոթ», «հրեշ» , «բացիլ», «պիղծ», «հիվանդ», «արա՛», «մեղավոր», «մարդկության թափոն»: Նշված բառերի բովանդակության ուղղվածությունը բացասական է: Տեղին է մեջբերել հոդվածի հերոսներից մեկի՝ Խաչիկի խոսքերը. «Պատմում է, որ մի փոխգնդապետ թղթապանակով սկսել է խփել. «Բա՞ դու տղամարդ ես, բա հայ տղամարդը իրա վրա շա՞ռ կանի՝ ես գյոթ եմ (միասեռական նշանակող վիրավորական հայհոյանք)»: Ինչ վերաբերում է «փչացած» պիտակին, ապա այն կիրառվում է հանցավոր աշխարհի ներկայացուցիչների կողմից, մասնավորապես նույնասեռականների և նրանց հետ ցանկացած, անգամ աննշան շփում ունեցող անհատների հանդեպ:

Նյութում հիշատակվում էր կոնկրետ անհատի մասին՝ նրան դիտելով «հազվագյուտ միասեռական», քանզի նա չի վախենում հրապարակել իր անունն ու ազգանունը և դա ազատություն է, որը նա վաստակել է: Ավելին, նույնասեռականների հանդեպ կարելի է հանդիպել այլ դրական ուղղվածություն ունեցող նմանատիպ բառակապակցությունների. տաղանդավոր երգիչ, ծրագրավորող (կիրառվել է 1 անգամ), գերազանց

սովորող(կիրառվել է 1 անգամ), ապագա քիմիկոս(կիրառվել է 1 անգամ), «ինտելեկտուալ ռեսուրս», ակտիվիստ Հրայրը(2 անգամ):

Վ.Իշխանյանի կողմից ուշադրության կենտրոնում են գտնվում որոշակի պետական կառույցներ, կառույցների բաղկացուցիչներ. դատարանը, ոստիկանությունը, բանտը, գաղութը, պաշտպանության նախարարությունը, հոգեբուժարանը, կալանավայրը, քրեակատարողական հիմնարկը: Նման կառույցների հետ կապված ներկայացվում է նույնասեռականների հանդեպ դրսևորվող գործողությունների շարք. «դատարանի կողմից հանցագործ է ճանաչվել», «ոստիկանները տանում են ու արվամոլության մեղադրանք ներկայացնում», «ոստիկաններն իրեն ահավոր ծեծում էին՝ պահանջելով այլ միասեռականների անուններ տալ», «վեց հոգի դատապարտվում են Հայաստանի Հանրապետության Քր. օր. 116-րդ հոդվածով՝ արվամոլություն», «բանտում մշտապես ենթարկվել է վերակացուների ճնշումներին», «կալանավորների կողմից էնքան ճնշում չեմ զգացել, ինչքան աշխատողների. ոնց որ իրանց համար խաղալիք լինեի, տանում ծաղրում էին, հետո նորից բերում, գցում կամեր», «մի ոստիկան նրան մշտապես շանտաժի ենթարկելով՝ պահանջում էր հարուստ միասեռականների անուններ տալ», «միասեռական լինելու մասին հայտնում է այն բարի տնօրենին, ով նրան և նրա միասեռական ընկերոջը հեռացնում է աշխատանքից», «Կամիսիայի հոգեբույժին ասեցի՝ գեյ եմ, գրիչը շպրտեց ու ասեց՝ վա՛յ քու, արա՛»:

Կառույցների հետ մեկտեղ հիշատակվում են ձևայնացված, պետական կարգավիճակներ, որոնց զբաղեցնողները դեմ են նույնասեռականությանը. ոստիկաններ, վերակացուներ, բանտի վերակացուներ, «կամիսիայի հոգեբույժ», փոխգնդապետ, նախկին ԱԺ պատգամավոր կամ առավել լայն՝ «քաղաքական գործիչներ», «հասարակական գործիչ» և այլն: Նյութում հիշատակվում են նաև ոչ պետական կառույցներ, որոնք դեմ են նույնասեռականներին: Խոսքը գնում է Հայ Առաքելական եկեղեցու և Հայ արիական միաբանության մասին:

Ինչ վերաբերում է պաշտպան, կողմնակից կազմակերպություններին, ապա նշվում է «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ն (PINK Armenia): Այն հանդես է գալիս նույնասեռականների իրավունքների պաշտպանությամբ ու զբաղվում սեռավարակների կանխարգելմամբ: Գոյություն ունեն նաև անհատ պաշտպաններ, մասնավորապես հոգեբան Դավիթ Գասպարյանը, ով դեմ է նույնասեռականների հանդեպ ճնշումների գործադրմանը և գտնում է, որ նման գործողություններն ունեն հակազգային նշանակություն:

Նույնասեռականների հանդեպ հայ իրականաությունում տիրող տրամադրության, իրավիճակի նկարագրման համար հեղինակը կիրառում է «միասեռականների նկատմամբ ատելությունն ու անհանդուրժողականությունը», «հասարակության կողմից զանազան ճնշումները», «հասարակության մեջ ֆոբիա կա միասեռականների հանդեպ», «խնդրի շուրջ հասարակության անիրազեկությունն ու կանխակալ կարծիքը», «ես մեկ անգամ բացահայտելու հայ հասարակության հոմոֆոբիան», «հիմա սկսվեց աղմուկ, մեր դեմ լարվածություն առաջացավ, հոմոֆոբները հավաքվում են ու մեզ հայհոյում», «անհանդուրժողականության ճնշումը», «հոմոֆոբիական տրամադրություններ» արտահայտությունները:

Բացի այդ, արտացոլված է նույնասեռականների հանդեպ դրսևորվող վերաբերմունքը հատկապես ընտանիքի անդամների ու ընտանիքից դուրս գործող համայնքի անդամների կողմից՝ հաշվի առնելով հայ հասարակությունում ընտանիքի և համայնքի կողմից անձի հանդեպ առկա բարոյասեռական վերահսկողությունը: Առանց մեկնաբանությունների առաջարկվում է ծանոթանալ նման բառաշարքի. «սկսում են հալածել թաղի տղաները», «հետևից գոռում՝ գոմիկ, քարերով խփում, հարձակվում, ծեծում», «ծնողները դուրս են անում տնից», «մայրը սկզբում լաց է լինում, իսկ հետո հոր հետ հարձակվում որդու վրա»

«պապաս ջղայինացավ», «դու ավելի լավ ա մեռնեիր, ավելի լավ ա իմանամ՝ տղա չունեմ, մահացել ա», «հարձակվեց, սկսեց խփել ինձ», «հետո ինձ ասեցին, որ ես իրանց տղեն չեմ այլևս, իրանց ընտանիքի անդամը չեմ կարա լինեմ ու իրանց տունը պիտի լքեմ», «կինը հրաժարվում է երեխաներից ու հանձնում մանկատուն, քանի որ պարզում է՝ նրանց հայրը միասեռական է», «մեկ այլ դեպքում՝ հայրը տնից դուրս է հանում 14-ամյա որդուն»: Եվ կար մեկ արտահայտություն՝ վկայող նախկին բացասական վերաբերմունքից կոնկրետ անձի հանդեպ չեզոք վերաբերմունքի փոփոխման մասին. «թաղում նրան էլ չեն հալածում, սովորել են նրա ներկայությանը»: Նման օրինակը խոսում է տալիս վերաբերմունքի փոփոխման հնարավորության մասին:

Բացի այդ, հոդվածում կիրառվել են «եվրոպական արժեք», «Եվրոպայում, թող հավաքվեն այնտեղ», «Եվրախորհրդի անդամ դառնալու շնորհիվ», «Եվրոպա», «եվրոպական երկիր» բառերը և բառակապակցությունները: Սա պատահական չէ, և այլ հոդվածներում ևս հանդիպում ենք նման երևույթի:

Ընդհանուր առմամբ, նկատելի է, որ նյութում փորձ է արվում պահպանել անկողմնակալությունը՝ ներկայացնելով միաժամանակ երևույթի երկու կողմերը: Վ. Իշխանյանը մի կողմից ցուցադրում է այն դեպքերը, երբ մարդը չի հարմարվել հասարակությանը ու ինքնասպանություն է գործել, իսկ մյուս կողմից այն դեպքերը, երբ մարդիկ պայքարել են ու հարմարվել իրականությանը: Բացի այդ, մի կողմից ցուցադրված են նույնասեռականներին հալածող, իսկ մյուս կողմից՝ աջակցող կառույցները:

Տեքստը հետաքրքրություն է ներկայացնում նաև այն առումով, որ կան բառեր, որոնք կիրառվել են ոչ թե մեկ, այլ մի քանի անգամ: Մասնավորապես «Ճնշում» բառը կիրառվել է 5 անգամ, «ազատազրկում» բառը՝ 2, «դատապարտվել»-ը՝ 4, «խփել» -ը՝ 3, որոնք ընթերցողի մոտ առաջ են բերում ավելի շուտ բացասական, քան դրական տպավորություններ:

Ակնհայտ է, որ փորձ է արվում ավանդական սեռական կողմնորոշում ունեցող անձանց հանդեպ ընթերցողների մոտ ձևավորել հանդուրժողականություն, ցույց տալ, որ այժմյան հայկական իրականությունում հաճախ խախտվում են նրանց իրավունքները:

ՀՀ տարածքում նույնասեռականներին՝ բացառապես արական սեռի ներկայացուցիչների նույնասեռականներին, ցուցադրել է որպես խոցելի խումբ:

Համապատասխանաբար, ի հայտ են գալիս հարցեր, որոնց պատասխանը հեղինակը չի ներկայացրել.

1.Ինչո՞ւ իգական սեռի ոչ հետերոսեքսուալ անհատների, Հայաստանում նրանց վիճակի վերաբերյալ խոսք չկա,

2.ԼԳԲՏ անձինք ինչպիսի՞ դրական և բացասական ազդեցություն կարող են թողնել հայ հասարակության վրա:

Նյութի բացասական կողմերից է այն, որ գրված է առանձին անհատների կյանքի պատմությունների հիման վրա ու ապացուցել դրանց իսկությունը դժվար է:

2011 թ. Փետրվարի 13-ին http://avetisyan.biz/archives/228 հասցեում տպագրվել է «Հայ ավանդական գոմիկներ ու էմոներ» անվանումը կրող հոդվածը, որը www.facebook.com սոցիալական ցանցի օգնությամբ “Like” են սեղմել 20 հոգի, 1 հոգի Թվիթերի օգնությամբ, մեկ հոգի հանրայնորեն խորհուրդ է տվել www.google.com որոնողական կայք-ում: Նյութը ստացել է 15 մեկնաբանություն: Հեղինակ Դավիթ Ավետիսյանը զուտ գնահատողական դատողություններ է ներկայացնում ու ոչ թե կոնկրետ փաստեր: Ըստ նրա դիտարկման՝ էմոների և գոմիկների(փաստորեն, ըստ հեղինակի էմո գոմիկ չի կարող լինել) թիվը իր ասելով «ահավոր» ավելացել է: Ելնելով համատեքստից՝ պարզ է դառնում, որ «տկլոր քամակներով» ման եկողների դերում իր ասած «գոմիկներն» են: Նա նույնպես այդ երևույթը կապում է Եվրոպա մտնելու գործընթացի հետ: Ավելին, հայ «տղամարդը», ընդ որում վրան գիծ է քաշված և բառի գույնը մոխրագույն է, ի տարբերություն տեքստի մյուս բառերի, և կողքին էլ ավելացված է «ղզիկ» պիտակը, երեկոյան զբաղվում է մարմնավաճառությամբ մեկ այլ տղամարդու հետ: Նսեմացնելու համար նշվում է «տռուսիկի ռեզինի տակ 100$ դնելը և տուն ուղարկելը… »:

Նաև քննադատական մոտեցում կա այն բլոգերների հանդեպ, ովքեր գրում են սեռական հարաբերությունների և իր կողմից կիրառվող «գոմիկների» մասին: Եվ հեղինակը գտնում է, որ այդ երևույթների սկզբնաղբյուրը դուրս է Հայաստանի սահմաններից և պետք չէ պարզապես ընդօրինակել օտար բարքերը:

Ինչպես և նախորդ նյութում, հեղինակի ուշադրության կենտրոնում ոչ ավանդական սեռական կողմնորոշում ունեցող արական սեռի ներկայացուցիչներն են: Նրանց հետ կապված շեշտադրված է մարմնավաճառության երևույթը:

Ընթերցելուց հետո պարզ է դառնում, որ հեղինակը բացասաբար է վերաբերում նույնասեռականությանը և նույնասեռականներին, ինչպես նաև այն բլոգերներին, ովքեր գրում են նրանց ու նրանց սեռական կողմնորոշման մասին, սակայն հարց է առաջանում, թե ինչու է հեղինակը հոդված գրել այդ թեմայով:

Արդեն 2011 թ. ապրիլի 10-ին մեկ այլ աղբյուրում[11] հրապարակվել է հոդված «Համասեռամոլ, թե ՂԶԻԿ, որն է սահմանը» անվանմամբ: Անանուն հեղինակը միանշանակ փորձում է համասեռամոլության և ղզիկության միջև կապ ստեղծել: Հեղինակի հաջորդ հաղորդվող ինֆորմացիան այն է, որ իր բառով «գոմիկության» մոդան հասել է նաև Հայաստան: Նաև մի տեղ նույնասեռականին նույնացնում է «Քուրիկի» հետ: Այլ աղբյուրում՝ http://178.248.236.29/arm/news/9078/hamaseramol-te-xzik-orn-e-sahmany.html ևս նույն անվանումն ունեցող հոդված է գցված 2012 թ. մայիսի 18-ին, որի ներքևում գրված է Կարապետ Նուրիջանյան և նշված է նյութի աղբյուրը՝ https://www.facebook.com/notes/%D5%AF%D5%A1%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D

[11] Տե՛ս http://hajoragir.wordpress.com/2011/04/10/%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%BD%D5%A5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%B8%D5%AC-%D5%A9%D5%A5-%D5%B2%D5%A6%D5%AB%D5%AF-%D5%B8%D6%80%D5%B6-%D5%A7-%D5%BD%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A8/

5%BF-%D5%, որը հնարավոր չէ բացել: Բայց էջը ապահովել է 1400 դիտում, որը փոքր թիվ չէ ի համեմատ մի շարք այլ նյութերի: Պարզապես նկատելի է, որ հեղինակը կենտրոնացել է արական սեռի նույնասեռականների վրա, մինչդեռ ԼԳԲՏ համայնքը միայն նրանցից չէ կազմված:

ԱՐՈՐԴԻ Մարտիկի օրագիր անվանումն է կրում ինտերնետային կայքի էջը[12], որում Արման Արամյանը 2012 թ. մայիսի 25-ին հրապարակել է իր «ԵՐԿՆԱԳՈՒՅՆ» ՋԵՅՄՍԲՈՆԴԵՐԸ ԵՎ ՏԽՐԱՀՌՉԱԿ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԱԿՈՒՄԲԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ» հոդվածը:

Նյութի անվանումից, շարադրված բուն տեքստից պարզ է դառնում, որ հեղինակը ակներև արտահայտում է իր բացասական վերաբերմունքը և՝ նույնասեռականների, և՝ նույնասեռակության հանդեպ:

Նույնասեռականների և նրանց հետ առնչություն ունեցող օբյեկտների հանդեպ կիրառվող պիտակներ
գույնզգույն թափոններ
պարզապես կեղտ են
հույժ արժեքավոր աշխատակիցներ
«երկնագույն» եւ «վարդագույն» ջեյմսբոնդեր
լծակների եւ ֆինանսների տեր ազդեցիկ գոմիկներ
«սեռակիցներ» կամ տեսակակիցներ
ու հենց այդպիսի կադրեր
յուրաքանչյուրը ամոթալի անցյալի եւ ներկայի հսկայական բեռ ունի
գարշելի գոմիկանոց
գույնզգույն շքերթի հետ
գույնզգույն վարակ

Կա հակակրանք, ըմբոստություն ընդդեմ ԱՄՆ-ի, ՀՀ -ում ԱՄՆ դեսպանատան, ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության, ամերիկյան հատուկ ծառայությունների և ընդհանրապես, առավել լայն բովանդակություն ունեցող «օտարերկրյա հատուկ ծառայությունների» դեմ: Նաև հիշատակվում են այնպիսի անձանց անուններ, ինչպիսիք են Հիլարի Քլինթոնը, Բարաք Օբաման, Ջոն Հեֆֆերնը և Պետդեպարտամենտի, Սպիտակ տան, ինչպես նաեւ ԱՄՆ արտգործնախարարության եւ հատուկ ծառայությունների ԼԳԵՓ-ների կազմակերպությունների ներկայացուցիչները: Բացի այդ, տեքստում կիրառվում է «օտարներին» բառը, որը հատուկ չի շեշտադրում ԱՄՆ-ը կամ վերջինիս կառույցները: Պատահական չէ, որ հոդվածի վերջում Ա.Արամյանը անդրադառնում է Երևանում անցկացված շքերթին և կապում այն հատուկ ծառայությունների

[12] Տե՛ս http://arman666.livejournal.com/tag/%D5%A3%D5%B8%D5%B4%D5%AB%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80

իրականացրած օպերացիայի հետ: Մի քիչ վերև հեղինակը մեկ անգամ «գործակալ» պիտակը փակցնում էր իր խոսքերով «երկնագույն» եւ «վարդագույն» ջեյմսբոնդերին:

Հոդվածում կոնկրետ ամսաթվեր չեն հիշատակվում:

Վերոնշյալ հոդվածը արտահայտում է հեղինակի վերաբերմունքը, որը միանշանակ բացասական է արական սեռի նույնասեռականների հանդեպ: Տեքստից կարելի է եզրակացնել, որ հեղինակը նույնասեռականության առկայությունը կապում է Հայաստանից դուրս գործող, մասնավորապես ամերիկյան քաղաքական կառույցների գործունեության հետ: Այլ կերպ ասած՝ կա մենքի ու նրանքի առանձնացման պահ: Նյութը հեղինակի անձնական կարծիքն է, վերաբերմունքը, սակայն որևէ փաստ չկա, որի վրա կարելի է հենվել:

Նմանատիպ գնահատողական մոտեցում կա 2012 թ. հուլիսի 22-ին Տիգրան Սարգսյանի «Համացանցը՝ թաքնված, երբեմն նաև բացահայտ քարոզչության ու սոցիումի քայքայման միջոց» փաստաթղթում[13], որում մի հատվածը նվիրված է նույնասեռականությանը: Այդ հատվածն այսպիսին է. «Չնայած նրան, որ Հայաստանը, Եվրոմիության անդամ լինելով, ընդունել է համասեռամոլների ազատությունն ու իրավունքները, սակայն փաստում ենք, որ համասեռամոլության քարոզչությունը ևս քայքայում է հասարակությունը՝ դեմ գնալով մեր ազգային արժեքներին ու հայկական ամուր ընտանեական ավանդույթներին, որոնք, նույնիսկ պետականությունը կորցնելու ժամանակ էլ, մեզ միասնական, ամուր ու ՀԱՅ են պահել: Այնպես որ, անհրաժեշտ է ավելի լուրջ ու զգույշ մոտենալ աղանդների ու համասեռամոլների գործունեությանը՝ դիտարկելով դրանք, որպես չափազանց վտանգավոր ու հասարակությունը քայքայող երևույթ»: Հասկանալի է, որ հոդվածի հեղինակի գլխավոր մտահոգությունը կապված է նույնասեռականության քարոզչության հետ, որն ըստ իրեն կարող է վերացնել հայերին: Հետաքրքրական էր նույն դատողության մեջ աղանդների ու համասեռամոլների միմյանց կողքին կիրառելը, որը վկայում է այն մասին, որ ըստ հեղինակի դրանք մոտ, նմանատպ գործունեությամբ զբաղվող սոցիալական խմբեր են: Նյութում սխալ է առկա, որը վերաբերում է Հայաստանի Եվրոմիության անդամ լինելուն: Ավելին, հիմնականում երևում է հեղինակի անձնական կարծիքը, վերաբերմունքը, որը փաստեր չունի:

Էդգար Անդրեասյանի բլոգում 2012 թ. Մայիսի 24-ին տեղադրված է «Վահրամ Սահակյան. Մեր գոմիկների մեծ մասը պո***կներ են» անվանմամբ նյութը[14], որի տեսանյութը առկա է նաև http://www.youtube.com/watch?v=-j7TfGN3-QY&feature=player_embedded հասցեում՝ «Վահրամ Սահակյան. Մեր գոմիկների մեծ մասը պոռնիկներ են» անվանմամբ, ընդ որում, www.youbube.com կայքում տեսանյութն ավելի վաղ է տեղադրվել՝ 2012 թվականի մայիսի տասնհինգին օգտատեր Հայկ Կարապետյանի կողմից: Եթե Էդգար Անդրեասյանի բլոգում մեկնաբանություններ թողնելու հնարավորություն չկա, ապա նույնը չի կարելի ասել հիշատակված մյուս աղբյուրի մասին: Է.Անդրեասյանի բլոգում ընդամենը 2 անհատ է սեղմել «Like» կոճակը՝

[13] Տե՛ս http://blognews.am/arm/news/18234/hamacancy-taqnvats-erbemn-naev-bacahayt-qarozchutyan-u-sociumi-qayqayman-mijoc.html
[14] http://for-brain.blogspot.com/2012/05/blog-post_24.html

www.facebook սոցիալական ցանցի միջոցով: Յութուբյան էջում դիտումների քանակը 29 704 է, ընդ որում դուր է եկել 195 օգտատիրոջ, դուր չի եկել՝ 37-ին:

Բլոգում տեղադրված նյութը սկսվում է 126 բառից կազմված տեքստից, որին հաջորդում է Վ.Սահակյանի հետ հարցազրույցի տեսանյութը: Ընթերցելով տպագիր մասը և դիտելով տեսանյութը՝պարզ է դառնում, որ հեղինակը թերագնահատում է նույնասեռականներին, ինչը կարելի է ցույց տալ ներքոհիշյալ կետերի միջոցով.

- **Անշունչ առարկաների հետ մասնակի նույնացում:** Երբեմն հեղինակը նրանց հանդեպ խոսքի մեջ կիրառում է «սրանց», «դրանց», «դրանք էն մարդիկ են» արտահայտությունները, որոնք կիրառելի են անշունչ առարկաների հանդեպ:
- **«Կատակային թեմա»:** Նա կատակային թեմա է համարում «համասեռամոլներ»-ին և պատմում է «ութի անեկդոտը»: Նրա խոսքերն են. «Ինչ վերաբերում է Հայաստանին, Հայաստանում ես կարծում եմ, որ էդ հոմոսեքսուալիզմը և արվամոլություն, լեզբիյանկա, տրանսֆիստիտ, բան, դրանք էն թեմաներն են, որոնց վրա մենք միշտ տղաներով կատակներ ենք անում ու մի տեսակ կատակային թեմա է էլի ու ոչ թե լուրջ բնույթ ունի, որ դնես դրանց մասին խոսաս կամ էլ լուրջ բան»:
- **«Նորմալ մարդկանցից» տարբերակում գենդերային ինքնության ցուցադրման միջոցով:** Կիրառում է «թեկուզ գոմիկ» բառակապակցությունը ու հետևյալ միտքը. «Օրինակ Եվրոպայում, ինչքան էլ շատ գոմիկ լինի, փողոցում կամ այլ հասարակական վայրերում չես տեսնի դրանցից ինչ-որ բան անելուց, **չես տարբերի նորմալ մարդկանցից**, իսկ էս մերոնք շատ դուխով գոմիկներ են, հեղաշրջում են ուզում անեն, պատմության մեջ գրվեն, ընենց հայավարի էլի..» Հետաքրքրական է, որ հեղինակը արվամոլների հետ մեկտեղ կոնկրետ դատողության մեջ հիշատակում է «եվրոպական», «եվրոպական ինչ որ ազատ մտածելակերպ, բան», «եվրոպականացման միտում» արտահայտությունները, որի հետ կապված քննադատում է նրանց կողմից դրսևորվող վարքը՝ վերաբերող իրենց ինքնության բացահայտ ցուցադրմանը որոշակի տարածքներից դուրս, օրինակ՝ հասարակական վայրերում: Ըստ նրա՝ նունասեռականները ցանկանում են համընդհանուր ուշադրություն գրավել: Նա գրում է. « Բայց երբ որ իրանք էդ ամեն ինչը հանում են ի ցույց աշխարհի, դա ոչ միայն չտեսություն, ռաբիզություն է, այլև իրենց կողմից, իրենց կարճ ուղեղով ինչ որ քաղաքական մի հատ քայլա...: Ավելին, հայ համասեռամոլները եվրոպական արժեքների մասին թյուր պատկերացում ունեն և այնտեղ համասեռամոլները հասարակական վայրերում, փողոցներում չեն առանձնանում իրենց վարքով, մինչդեռ մեր համասեռամոլները ակնհայտորեն ցուցադրում են իրենց սեռական կողմնորոշումը»:
- Ֆիզիկական և հոգեբանական բռնությունից խուսափելու տարբերակն ըստ Վ.Սահակյանի: Նույնասեռականներն իրենց չցուցադրելու, առավել համեստ կյանքով ապրելու դեպքում կխուսափեն իրենց հանդեպ ֆիզիկական և հոգեբանական բռնության կիրառումից:
- **«Հայեր» վիճակագրական կատեգորիայի հետ նույնացում կամ բացառում**: Նա նույնասեռականներին կասկածանքով է նույնացնում «հայեր» վիճակագրական կատեգորիայի հետ(«էս մեր հայերը, եթե դրանց կարելիա հայ համարել»):

- **Շփումների բացառում կամ շփումների սահմանափակում:** Հեղինակը չի բացառում նրանց հետ շփումը, բայց միաժամանակ դա հաստատուն որոշում չէ, քանզի կա կասկածամտություն. «... անգամ գործնական հարցով դու կարաս հետը շփվես, թեև չարժի», «Ես կոչ եմ անում ոչ գնա'լ ծեծել դրանց, ոչ կոչ եմ անում՝ չծեծել»:

Պիտակների հետ կապված հիշարժան է այն, որ նա «գոմիկներին» նույնացնում է խեժապահպանակի հետ, 8-ի հետ, «ինքը ութա, բայց լավ տղայա», նրանց հանդեպ կիրառում է «հայերենի չորս տառանոց բառը»:

Իհարկե, հիմնականում հեղինակը խոսում է ընդհանուր բոլորի մասին, սակայն մի պահ փորձում է առանձնացնել այդ բոլորի մեջ շերտեր և գտնում, որ կան այդ կատեգորիայի մեջ նաև համեստ, գաղտնի կյանքով ապրող մարդիկ ևս:

Կարևոր է նաև այն հատվածը, որում հեղինակը նույնասեռականների, մասնավորապես արական սեռի նույնասեռականների մեծամասնությանը համարում է պոռնիկ: Որպես ազգի դավաճան համարում է Լեվոնին և լևոնականներին, իսկ վերաբերմունքը Ռաֆֆի Հովհաննիսյանի հանդեպ հստակ չէ, բայց դրական որակելը դժվար է:

Ընդհանրացնելով՝ պարզ է, որ պատկերացումները բացասական են նույնասեռականների, նրանց սեռական կողմնորոշման վերաբերյալ: Նրանց հանդեպ հեղինակն ունի կարծրատիպային մտածողություն:

Բավական հաճախ հումորային տարբեր հաղորդումների շրջանակներում նույնպես ուշադրության կենտրոնում հայտնվում են նույնասեռականները: Բացառություն չէ 006 antiVirus - The Gays տեսանյութը[15], որի դիտումների քանակը 44 428 է: Հրապարակված է 2012 թ. հունիսի 22-ին օգտատեր Anti V irus-ի կողմից: Նշենք, որ տեսանյութը դուր է եկել 1671օգտատիրոջ, իսկ դուր չի եկել 215-ին: Թվերը փոքր չեն, ի համեմատ այդ թեմայով այլ տեսանյութերի:

Նա նույնասեռականների հանդեպ երկու անգամ կիրառում է «քլնգել» բայը: Նրանց հանդեպ զզվանքի մասին տեքստում բառացիորեն նշվում է երկու անգամ, սակայն ողջ ընթացքում այդ վերաբերմունքն ակներև է: Տեսանյութում բերված է Վահրամ Սահակյանի տեսանյութից մի հատված. «Փաստորեն ինքը ութա, իսկ ութից ամեն ութություն սպասելիա»:

Հատուկ անդրադառնում է DIY-ի դեպքերին ի դեմս Ծոմակի, որին մի տեղ տեքստում կիրառում է «քամակի» պիտակը: Ըստ նրա՝ ակումբի պայթեցման պատճառը եղել է վերջինիս նույնասեռականների հավաքատեղի լինելը:

Վարողը բացասական վերաբերմունք ունի Ծոմակի և նրա թիմի հանդեպ: Նրա խոսքից մեջբերում. «…պլասկակուպցի, կուսաչկա, չէ՛, չէ՛ պինցետ, ինչ է նշանակում պինցետ և ովքեր են նրանք: Միգուցե սեքսշոփից նրանք ձեռք են բերել էլեկտրովիբրատոր, էհ, էլեկտրոգիթար և նվագում են ռոք…»:

Ավելին, նա կողմ է ակումբի այրմանը և նրանց, ովքեր Երևանում կազմակերպել էին ցույց ընդդեմ նույնասեռականների:

Ծոմակին և նրա թիմակիցների հագնվելու ոճը համարում է անընդունելի, պահվածքին կցում է «լկտի» ածականը, խոսում է նրանց իրար բերան թքելու, մերկ տղամարդկանց ու

[15] Տե՛ս http://www.youtube.com/watch?v=u13EsqIu1mg&feature=fvwrel

քամահրանքով այն մասին, որ նման մարդիկ Թուրքիայում ներկայացրել են հայ մշակույթը: Ու դրանից հետո թքում:

Նրա համոզմամբ չի կարող լինել տղամարդը տղամարդու հետ և կինը կնոջ հետ և նրանց միջև առկա չակերտավոր սերը համարում է ոչ նորմալ երևույթ:

Հաղորդման ընթացքում նույնասեռականներին հայհոյում է 2 անգամ, որը ենթադրում է բոլորի կողմից կիսվող ձայնային սիմվոլի միջոցով: Նույնասեռական բառի համար նա մտածել է մի քանի տարբերակներ. թորգոմիկ, gaymover, GAYDARALIEV, CH ГЕЙ, GALUBOYD TAGHEM EV YOHAN VOLF GANG GYOTE:

Հետո նշում է այն կետը, որ մեր կառավարությունում նույնպես կան թաքնված համասեռամոլներ՝ աջակցող հայ շոուբիզնեսի բազմաթիվ արական սեռի պատկանող աստղերի:

Բացահայտ դրսևորվող անհանդուրժողական վերաբերմունքը երևում է նաև նման դատողությունից՝ «Կան գոմիկներին անիծելու շատ ձևեր: Օրինակ՝ սաղ աշխարհի տղամարդիկ անհետանան ու մնաս մենակ դու կամ ընկնես դրախտ, սաղ տղա լինեն, բայց դաշնակ, կամ քաղաքում ման գաս, մոլորվես ու ընկնես մի թաղամաս, այն էլ մի քյառթու թաղամաս»:

Ելնելով այն փաստից, որ տեսանյութի ընթացքում վարողը մի քանի անգամ հիշում է Ծոմակի, նրա ռոք խմբի և ակումբի գործունեության մասին հասկանալի է, որ տեսանյութի ստեղծմանը դրդել են գլխավորապես DIY ակումբի պայթեցումը և դրան հաջորդող իրադարձությունների ընթացքը:

Վերոնշյալ նյութերի վերլուծումից կարող է ստեղծվել այն առաջնային տպավորությունը, թե ԼԳԲՏ անձինք համացանցում գլխավորապես ունեն բացասական իմիջ, նրանց սեռական կողմնորոշման վերաբերյալ մատուցվում է կողմնակալ, բացասական ինֆորմացիա, մինչդեռ հայկական համացանցային որոշ աղբյուրներում կարելի է գտնել նաև բովանդակությամբ չեզոք, անգամ ԼԳԲՏ անձանց իրավունքները, շահերը պաշտպանող տարաբնույթ նյութեր:

Սակայն թյուր պատկեր կարող է ստեղծվել, թե նույնասեռականները միայն ենթարկվում են խտրականության, պիտակավորման: Այլ կերպ ասած՝ ավելի շուտ ազդեցության օբյեկտ են, քան սուբյեկտ: Մինչդեռ իրականում նրանք ծավալում են սեփական իրավունքների պաշտպանությանն ուղղված ակտիվ գործունեություն: Նախքան որոշակի հոդվածների, տեսանյութերի դիտարկմանն անցնելը, պետք է պարզապես նշել, որ անգամ այդ նյութերի ազատ տեղադրումը համացանցում, դրանց քանակը, դրական կողմից է բնութագրում հասարակությունը:

2010 թ. դեկտեմբերի 7-ին համացանցային հասցեում[16] տեղադրված է մի խումբ միասեռականների բաց նամակը՝ ուղղված ՀՀ ոստիկանապետին, որը վկայում է այն մասին, որ նույնասեռականները հարկ եղած դեպքում պայքարում են սեփական իրավունքների պաշտպանության համար:

[16] Տե՛ս http://www.hraparak.am/13905/

Գրող, հրապարակախոս, ինչպես նաև ԼԳԲՏ անձանց բացահայտ պաշտպան Լուսինե Վայաչյանի հարցազրույցը կարելի է գտնել հասցեում[17]: Նյութն ապահովել է 1480 դիտում, 57 «Like» www.facebook.com սոցիալական ցանցի օգնությամբ, ինչպես նաև փաստաթուղթն ապահովել է 1343 դիտում:

Լ. Վայաչյանը նշում է, որ ունի ծանոթներ, որոնց սեռական կողմնորոշումը տարբերվում է: Ու հեղինակը իր ծանոթներին կցում է «պարկեշտ, սովորական կյանքով ապրող» ածականները, բայց նյութում կենտրոնանում իր խոսքով «տրասս» կանգնող «տրանսեր»-ի վրա կամ մեկ այլ տեղ «տրասսի տրանսեր»-ի վրա: Նա «գեյ» բառը կիրառում է ողջ ԼԳԲՏՔ մարդկանց մասին խոսելիս, ինչպես ըստ նրա դա արվում է ողջ աշխարհում: Հատկանշական է, որ հեղինակն ի սկզբանե չի թաքցնում իր դրական վերաբերմունքը ԼԳԲՏՔ –ների հանդեպ և փորձում է ցույց տալ նրանց վիճակը ՀՀ-ում և դա կատարում է մասնավորապես այլ երկրների հետ համեմատության շնորհիվ:

ԼԳԲՏՔ –ն ՀՀ-ում ցուցադրելու համար տեքստից դուրս են գրվել որոշ հատվածներ.

ԼԳԲՏՔ –ն ՀՀ-ում	ԼԳԲՏՔ – ն եվրոպական երկրներում ու Ամերիկա մայրցամաքում, Ավստրալիայում ու մի շարք զարգացած երկրներում
ամենախոցելի խումբն է մեզ մոտ,	արտոնյալ խավն են
մեզ մոտ նրանք ողբալի վիճակում են	նրանք կարող են հոյակապ գոյատևել միայն իրենց տրանսվիստի-շոուի միջոցով
….մշտական վախի մթնոլորտում են…	Էնտեղ հարգի է տարբերը, հարգի է մարդը, նրա շնորհները, նրա առաջարկած արվեստը, սեքսը, ամեն ինչ, տրանսերը ամբողջ աշխարհում համարվում են «համով պատառ»…

Ինչ բայեր են կիրառվում տեքստում հեղինակի կողմից, որոնք ցուցադրում են այդ մարդկանց հանդեպ դրսևորվող բացասական վարքը. հաճախ նրանց ծեծում ու բռնաբարում են, կարող են նաև սպանել, նրանք խարանված են, հալածվել, ծեծվել, սոցիումը դուրս է մղել նրանց իր միջից, մարդիկ նրանցից նողկում են: Իհարկե դրա հետ մեկտեղ հեղինակը հավելում է, որ որոշ մարդիկ պաշտպանված են այսպես կոչված «վերին օղակների» կողմից:

Հեղինակը հարցվողներից մեկին այսպես է նկարագրում. «… շատ- շատ գեղեցիկ մի էակ է՝ կանացի, ընդգծված դիմագծերով, մեծ, լայն ու գեղեցիկ ճակատով, որը խոսում է նրա մտավոր ունակությունների մասին, ցանկացած երկրի ցանկացած թատրոն պետք է նրան խնդրեր լինել իր թատերախմբում, բայց ոչ Հայաստանում: Հայաստանում նա ընդամենը պոռնիկ է:»:

Հեղինակի հարցվողներն ուրիշների կողմից իրենց հանդեպ կիրառվող պիտակներից նշում են «…վիրուսոտ եք, լկտի եք, սենց եք- ընենց եք… » և այլն:

[17]Տե՛ս http://www.armversion.am/2011/11/10/%D5%BF%D6%80%D5%A1%D5%BD%D5%BD%D5%AB-%D5%BF%D6%80%D5%A1%D5%B6%D5%BD%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%AF%D5%A1%D5%BE%D5%A1%D5%BF%D5%B6%D5%A5%D6%80%D5%B6-%D5%B8%D6%82-%D5%BC%D5%A5%D5%AF%D5%A5%D5%BF%D5%A8/

Հարցվողներն իրենց իսկ կյանքի մասին. «քշում են Կոմայգուց, մեզ ոչ թե պաշտպանում, այլ շատ խանգարում են մեր գործին: Ի՞նչ իրավունք ունի ոստիկանը ինձ տանի քաղմաս, ընդե ինչ ուզի իմ հետ անի: Շահառուները ինձ ծեծել, բռնաբարել, պիստալետ են պահել վրես, ու էդ տիպի մարդկանցից պետք է խուսափել, Գալիս են, ասում են նստի մեքենան՝ քաշքշում են, ծեծում են, ոստիկանները դա տեսնում են ու ոչ մի բան չեն անում նրանց: Էդ նույն ոստիկանները մեզ հետ թփերի մեջ սեքսով են զբաղվում, օգտվում են մեր ծառայություններից անվճար»:

Տեքստում միանշանակ թշնամու կերպարով ներկայացված են ոստիկանները և՝ հեղինակի կողմից, և՝ հարցվողների կողմից: Դժգոհություններ կան նրանց վարքից: Նույնիսկ մեկի խոսքերով. «Իբրև պաշտպանում ե՞ն մեզ, չեն պաշտպանում, ռեկետ են անում, սուտենյորություն, կավատներ են մեր ոստիկաններն ու ռեկետյորներ»:

Մի տեղ դժգոհություն էր արտահայտվում պետության, մասնավորապես քաղաքապետարանի դեմ, որն իրենց տարածքով չի ապահովում, բայց ցանկանում է հեռացնել Կոմայգուց:

Հեղինակը կոչ է անում գաղափարապես առաջադեմ երկրներին հավասար զգալու համար լինել հանդուրժող ոչ ավանդական սեռական կողմնորոշում ունեցող անհատների հանդեպ: Պետք է նշել, որ նյութում կրկին փաստեր չկան, այլ կան կոնկրետ անհատների պատկերացումները սեփական կյանքի մասին: Իհարկե, նյութի բովանդակության վրա որոշիչ ազդեցություն է թողել հեղինակի կողմնակալ վերաբերմունքը ԼԳԲՏ անձանց հանդեպ: Կարճ ասած՝ իրականությունը պատկերված է միակողմանիորեն, ի նպաստ որոշակի վիճակագրական կատեգորիայի:

2011 թ. դեկտեմբերի 7-ին http://lurer.com/?p=3975&l=am, http://m.lurer.com/?p=3975&l=am աղբյուրում տեղադրված է «ԱՄՆ-ը՝ համասեռամոլների իրավունքների պաշտպան» անվանումն ունեցող հոդվածը: Վերոնշյալ նյութի լրագրողի անունը նշված չէ:

Ըստ այդ նյութի՝ ԱՄՆ-ը հայտարարել է, որ պատրաստվում է ամբողջ աշխարհում պաշտպանել սեռական փոքրամասնությունների իրավունքները և դիվանագիտական ճանապարհներով պայքարել նրանց հանդեպ խտրական վերաբերմունքի դրսևորումների դեմ: Այս հայտարարությունն արել է ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը՝ ելույթ ունենալով ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովում: Նա մասնավորապես ասել է, որ համասեռամոլների իրավունքները մարդու իրավունքներն են: ԱՄՆ կառավարությունը հուշագիր է ստորագրել, որի համաձայն ֆինանսական աջակցություն և քաղաքական ապաստան տրամադրելիս ԱՄՆ պետական գրասենյակները հաշվի են առնելու տվյալ երկրում նույնասեռականների հանդեպ վերաբերմունքը:

Նյութի ընթերցումից հետո պարզ է դառնում, որ այն առաջնահերթ կհետաքրքրի նույնասեռականների շահերի պաշտպանությամբ զբաղվող կամ զբաղվել պատրաստվող անհատներին ու կազմակերպություններին, իսկ անուղղակիորեն կարող է դիտվել որպես նորություն ցանկացած քաղաքացու համար՝ անկախ սեփական սեռական կողմնորոշումից:

Մեկ այլ աղբյուրում[18] 2012 թ. մայիսի 15-ին անանուն անձի կողմից տեղադրված է «Լեսբուհիները, գեյերը, բիսեքսուալները, տրանսգենդերներն ու հայկական իրականությունը» հոդվածը: Ստացել է 6 մեկնաբանություն և 10 անձանց դուր է եկել www.facebook.com սոցիալական ցանցի միջոցով: Նյութը տեղեկատվական բնույթ ունի և հաղորդում է այն մասին, որ սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վիճակը Հայաստանում գնահատել են Մարդու իրավունքների պաշտպանության ակտիվիստներն ու ՀՀ իշխանության և միջազգային հանրության ներկայացուցիչները: ՄԱԿ–ի երևանյան գրասենյակը հաղորդագրություն է տարածել, որում նշված է, որ միջոցառման նպատակն է բարձրացնել հանրային իրազեկվածությունը լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր (ԼԳԲՏ) անձանց նկատմամբ խտրականության վերացման և նրանց իրավունքների վերաբերյալ:

Միջոցառման ժամանակ քննարկվել են ԼԳԲՏ անձանց նկատմամբ հանդուրժողականության և նրանց հասարակություն ինտեգրելու խնդիրները:

Հոդվածը միանշանակ ուղղված է ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանը և նրանց դեմ արտահայտված որևէ բացասական կարծիք չկա:

«Համասեռամոլների դեմ պայքարողները, թաքնված համասեռամոլներ են» անվանումով նյութը տեղադրված է այլ հասցեում[19], որը սակայն հնարավոր չէ բացել:

Համենայնդեպս, այն ապահովել է 1288 դիտում, 16 անձ www.facebook.com կայքի միջոցով սեղմել է «Like» կոճակը և թողված են 6 մեկնաբանություններ: Նյութը հրապարակվել է 2012 թ. մայիսի 16-ին Առաքել Սեմիրջյանի կողմից: Այժմ կմեջբերվի երևացող նյութի հատվածը. «Ուսումնասիրելով հոմոսեքսուալիստների դեմ ստատուս գրողների ստատուսներն ու քոմենթները, այնպիսի մանրամասնորեն են նրանք նկարագրում նույնասեռականության վատ ու թաքնված կողմերի մասին, որ տպավորություն է ստեղծվում, որ էդ մարդիկ մի քանի անգամ փորձել են նույնասեռականություն, բայց դուրները չի եկել, դրա համար էլ հիմա իրենք դարձել են հոմոտյաց....Բայց ենթագիտակցորեն հաստատ մի տենց բան կա, որովհետև, բոլոր թաքնված հրեաները ավելի դաժան են եղել հրեաների հանդեպ քան գերմանացիները, իրենց ազգությունը թաքցրած հայերը երիտթուրքերի մեջ էլ քիչ չէին ու ավելի դաժան.....ու այսպես բոլոր դեպքերի համար... »:

Հասկանալի է, որ հեղինակը բացասական վերաբերմունք է տածում այն հայերի հանդեպ, ովքեր վիրավորում են նույնասեռականներին և իր գնահատմամբ նույնասեռականներին դեմ դուրս եկողներն էլ են նույնասեռական: Իհարկե, գնահատողական դատողություններ են, անգամ անհիմն մեղադրանքներ են ներկայացնում նյութի ստեղծողի կողմից, մինչդեռ փաստեր բերված չեն, որը նվազեցնում է նյութի հանդեպ վստահության մակարդակը:

http://www.slaq.am/arm/news/53888/ ինտերնետային աղբյուրում 2012 թ. մարտի 9-ին տեղադրված է «Հայ հասարակությունը՝ համասեռամոլների մասին» տեսանյութը:

[18] Տե՛ս http://hayeli.am/%D5%AC%D5%A5%D5%BD%D5%A2%D5%B8%D6%82%D5%B0%D5%AB%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%A3%D5%A5%D5%B5%D5%A5%D6%80%D5%A8-%D5%A2%D5%AB%D5%BD%D5%A5%D6%84%D5%BD%D5%B8%D6%82%D5%A1%D5%AC%D5%B6%D5%A5%D6%80-%D5%BF/

[19] Տե՛ս http://blognews.am/arm/news/8879/hamaseramolneri-dem-payqaroxnery-taqnvats-hamaseramolner-en.html

Տեսանյութի հետ կապված դիտումների քանակը չի երևում, սակայն 17 անհատ սեղմել է «Like» կոճակը www.facebook.com սոցիալական ցանցի օգնությամբ:

Տեսանյութում ցուցադրվում է, որ **անցկացվում է տարերային** հարցում երևանյան մի քանի վայրերում, սակայն հարցվողներից ստացված տվյալները իհարկե չի կարելի ընդհանրացնել ՀՀ ողջ բնակչության վրա՝ ելնելով ընտրված մեթոդից: Հարցը հետևյալն էր. Ինչպես եք վերաբերվում համասեռամոլությանը»: Պատասխանող արական սեռի երիտասարդներից մեկը նշեց «վատ» տարբերակը և հիմնավորեց, որ «դրանք մարդ չեն»: Մեկ այլ արական սեռի ներկայացուցիչ ևս նշեց, որ «լավ չի վերաբերվում»: Երկու իգական սեռի երիտասարդ աղջիկներ ևս դեմ արտահայտվեցին նույնասեռականությանը՝ պիտակելով այն որպես «շեղվածության ինչ որ տիպ»: Բոլոր հարցվողները միաբերան դեմ էին արտահայտվում համասեռամոլությանը՝ նշելով «վատ», «շատ վատ» տարբերակները: Մի երիտասարդ էլ նշեց, որ իրենք իրավունք չունեն ապրելու: Ոչ մի դրական կարծիք չհնչեց ի պաշտպանություն նույնասեռականների և նույնասեռականություն: Նման մոտեցման կիրառումը կողմնակալություն է: Պարզ տրամաբանությունը հուշում է, որ նույն հասարակության մեջ չեն կարող բոլորը նույն կերպ վերաբերվել նույնասեռականներին:

Նույն տեսանյութը տեղադրված է http://www.youtube.com/watch?v=54y_NLXhwIQ&feature=related աղբյուրում «slaq.am «Համասեռամոլներն ապրելու իրավունք չունե՞ն» անվանումով: Ամսաթիվը՝ 09.03.2012, օգտատեր՝slaq media Slaq Media: Դիտումների քանակը՝ 11029: Դուր է եկել 24 օգտատիրոջ, իսկ դուր չի եկել 35-ին:

«ԴԱՐ» Ակումբ անվանումը կրող ֆորումի էջում[20] կարելի է հանդիպել հարցադրման և քննարկման: Ֆորումում ակտիվ քննարկում է ծավալվել «Սերը սե՞ռ չի ճանաչում» թեմայի շուրջ և կայքում գրանցված թվով 118 մասնակիցներ իրենց վերաբերմունքն են արտահայտել նաև՝ պատասխանելով փակ հարցին[21], որը հնչում է հետևյալ կերպ. «Ի՞նչ վերաբերմունք ունենք միասեռականների նկատմամբ»: Ստացված արդյունքները տե՛ս գծապատկեր 1-ում: Իհարկե, պետք է անպայման հաշվի առնել մի քանի կետեր: Նախ հարցին պատասխանել են միայն գրանցված անհատները: Հարցի հանդեպ հետաքրքրություն են ցուցաբերել հիմնականում երիտասարդները, որը երևում է թողնված մեկնաբանություններից:

[20] Տե՛ս http://www.akumb.am/showthread.php/22469-%D5%8D%D5%A5%D6%80%D5%A8-%D5%BD%D5%A5%D5%BC-%D5%B9%D5%AB%D5%9E-%D5%B3%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B9%D5%B8%D6%82%D5%B4%D6%89

[21] Տե՛ս http://www.akumb.am/showthread.php/22469-%D5%8D%D5%A5%D6%80%D5%A8-%D5%BD%D5%A5%D5%BC-%D5%B9%D5%AB%D5%9E-%D5%B3%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B9%D5%B8%D6%82%D5%B4%D6%89



Եթե ցանկանում ենք պարզել ԼԳԲՏ անձանց, նրանց սեռական կողմնորոշման հանդեպ վերաբերմունքը, ապա պետք է չմոռանանք նաև հայ հասարակությունում դոմինանտ կրոնի՝ քրիստոնեության մասին:

2012թ մայիսի 16-ին http://blognews.am/arm/news/8840/astvatsashunchy-hamaseramolutyan-masin.html էջում տեղադրվել է «Աստվածաշունչը համասեռամոլության մասին» հոդվածը, որը դիտվել է 1637 անգամ, ստացել է 11 մեկնաբանություն և 117 «Like» www.facebook.com սոցիալական ցանցի միջոցով:

Հեղինակի կողմից հաղորդվող ելակետային գաղափարները հետևյալներն են.

- Ոչ ավանդական սեռական կողմնորոշում ունեցողների մասին հիշվել է քաղաքական ընտրություններից հետո, այնուհետև հիշատակում է Օբամայի ոչ կոնկրետ հայտարարությունը և այնուհետև խոսվում է Երևանյան ակումբի(իր բառերով«գեյ փաբի») այրման մասին:
- Աստվածաշնչի՝ քրիստոնյաների սուրբ գրքի դիրքերից ցուցադրվում է, որ նույնասեռականությունը մեղք է և ինչպես մյուս բոլոր մեղքերը, անհանդուրժելի է Աստծո կողմից:
- Բերվում են սուրբգրքային մեջբերումներ՝ուղղակի կերպով փաստող նույնասեռականության հանդեպ Աստծո բացասական վերաբերմունքը:
- Քրիստոնյաների պայքարը մարդու դեմ չէ, այլ՝ մեղքի:

Կրկին նկատելի է այն, որ ուշադրությունը մասնավորապես սևեռված է «համասեռամոլների» և «համասեռամոլության» վրա:

2012 թվականի մայիսի 31-ին «Ինքն իրեն համասեռամոլ հռչակող մարդը չի կարող լինել քրիստոնյա». Տեր Վահրամ քահանա Մելիքյան» նյութն է տեղադրվել http://www.haynews.am/hy/1338460498 ինտերնետային աղբյուրում: «Like»-երի թիվը www.facebook.com սոցիալական ցանցի միջոցով կազմել է 15, իսկ նյութի դիտումների թիվը չի երևում:

Panorama.am-ը խնդրի վերաբերյալ Հայ առաքելական եկեղեցու պաշտոնական դիրքորոշումը ճշտելու համար հարցեր է ուղղել Մայր աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Տեր Վահրամ քահանա Մելիքյանին, ով ներկայացնում է Մայր աթոռ սուրբ Էջմիածնի պաշտոնական դիրքորոշումը:

Ըստ նրա՝ Հայ Եկեղեցին չի կարող ունենալ այլ դիրքորոշում, քան սուրբգրքային հայտնությունն է: Ըստ այդմ՝ նույն սեռի մարդկանց սեռական հարաբերությունների առնչությամբ Սուրբ Գիրքը նմանատիպ ընթացքը հռչակում է Աստծո կամքին հակառակ. «Այր մարդու հետ չպառկես, ինչպես պառկում ես կնոջ հետ, որովհետև դա պղծություն է» (Ղևտ. 18.22):

Ավելին, Հայ Եկեղեցին դաստիարակչական, քարոզչական և բացատրական աշխատանք է իրականացնում՝ Աստծո կամքն ու կրոնական ճշմարիտ տեսակետը համասեռամոլ (միասեռական, նույնասեռական) անձանց հասանելի դարձնելու և ըստ այդմ օգնելու մեր Տեր Հիսուս Քրիստոսի պատվիրաններին և քրիստոնեական բարոյականության սկզբունքներին հավատարմությամբ կազմակերպելու իրենց կյանքը:

Բացի այդ, Հայ Եկեղեցին միանշանակ դեմ է նույնասեռականությանը և չի ընդունում այլակարծություն ու քարոզում է նույնասեռականներին մեղքից ազատվելու համար զղջալ, ապաշխարհել:

Պինցետ ռոք խմբի այցը Թուրքիա և DIY փաբի հրդեհման փորձը. սոցիալական ընկալումների առանձնահատկությունները

Սկզբում կդիտվեն մի քանի տպագիր հոդվածներ: 2012 թ. մայիսի 18-ին «Հայոց աշխարհ»-ի լրագրող Գևորգ Հարությունյանի կողմից գրված

«ՀՅԴ-ականը ողջունում է DIY ակումբը պայթեցնողների արարքը» հոդվածը[22] միանշանակորեն դեմ է արտահայտվում նույնասեռականներին:

1.DIY ակումբի հետ տեղի ունեցածը կազմակերպված սադրանք է: Նման ընկալում ունի ՀՅԴ-ական Արթուր Աղաբեկյանը: Նրա կարծիքը. «Համասեռամոլների ակումբում տեղի ունեցած միջադեպի մանրամասներն ու հանգամանքները ուշադրությամբ ուսումնասիրելուց հետո միանգամայն հիմնավոր կասկած է առաջացել, որ դա հմտորեն կազմակերպված սադրանք է: Համասեռամոլները պարզապես հասարակությանը ներկայանալու եւ ընդունելի դառնալու ճանապարհներ են որոնում:»:

2.Նա լիովին կողմ է այն երիտասարդներին, ովքեր անհանդուրժող են հասարակության մեջ շեղումներ ունեցողներին: Նա համասեռամոլների հանդեպ կիրառում է «այլասերող համասեռամոլների» արտահայտությունը և նաև դեմ է այլ շեղումներ ունեցող խմբերին: Նրա խոսքից հատված. «Լինելով բռնության բոլոր դրսեւորումներին դեմ մարդ, ես ողջունում եմ, որ հայ երիտասարդները ոչ միայն իրենց ահազանգն են հնչեցնում, այլեւ կոնկրետ քայլերով են պայքարում մեր ազգային արժեքներն ու հավատը խարխլող արատների դեմ: Վստահ եմ, որ արդյունքում շահելու է հայ ժողովուրդը, վերականգնվելու է մեր ինքնության կորցրած հատվածը:» Մենք սատարել ենք այդ երիտասարդներին, որ մեր ժողովուրդը հայոց բարձրավանդակում արժանապատիվ ապագա ունենա:

3. Գտնում է, որ այդ երևույթները հանդուրժելու դեպքում, հայ ինքնությանը համասեռամոլները նույնքան վնաս կարող են պատճառել, որքան ադրբեջանցիները ցանկանում էին հասցնել տասնամյակներ առաջ:

4. Փորձում է հաահերոսի կերպար ձևավորել ի դեմս Ռաֆֆի Հովհաննիսյանի: «Միաժամանակ կխորին ցավ զգացի, երբ տեղեկացրին, որ խորհրդարանական կուսակցություններից մեկի ղեկավարը միջադեպից հետո եղել է համասեռամոլների ակումբում՝ հավանաբար իր այդ պահվածքով վերաբերմունք ցույց տալու համար: Չեմ կարծում, թե այսպիսի քայլ անող քաղաքական գործիչը կարող է համարվել ազգային արժեքների ժառանգորդ»:

Հոդվածը գրելու գլխավոր պատճառը հետևյալն է. նույնասեռականները հայ ինքնության համար ներկայացնում են վտանգ ու նրանց դեմ հարկավոր է պայքարել:

[22] Տե՛ս http://www.aravot.am/2012/05/18/71892/

Ինչ փաստերից ելնելով է համարում, որ ակումբի հետ կատարված միջադեպը ակումբի անդամների կողմից է կազմակերպված: Սա այն հարցն է, որը կարելի է ուղղել Արթուր Աղաբեկյանին: Այնուամենայնիվ հոդվածն ընթերցվել է 655 անգամ ու ստացել է www.facebook.com կայքի միջոցով 120 «Like»:

Մեկ այլ աղբյուրում[23] ներկայացված ՀՅԴ ներկայացուցիչ Արծվիկ Մինասյանի հետ հարցազրույցից կարելի է տեղեկանալ, որ նա հաստատել է, որ Հրայր Կարապետյանի հետ մեկտեղ ակումբը պայթեցնող երիտասարդներին գրավի գումար է տրամադրել: Բացի այդ, ևս մեկ անգամ նա հայտնել է իր դիրքորոշումը սեռական փոքրամասնությունների հանդեպ: «Այսօր ասուլիսում Ծոմակը հայտարարել է, թե Դաշնակցությունն անընդհատ հետապնդում է իրեն, ասել է, որ իր ունեցած փաստերը ներկայացնելու է իրավապահ մարմիններին»: Այդ դատողությանն ի պատասխան Արծվիկ Մինասյանը հետևյալ կերպ է պատասխանել.

«Ծոմակին ես երեկ հեռուստատեսությամբ եմ առաջին անգամ լսել և համարում եմ, որ նրա տեսակը, կոպիտ բառ չեմ ուզում ասել, ոչնչացնում է հայ հասարակությանը»:

Մեկ այլ քաղաքական ուժ՝ ՀՀԿ անդամ Էդուարդ Շարմազանովը ևս դեմ է արտահայտվել նույնասեռականներին, որի մասին ինֆորմացիան կարելի է գտնել 2012 թ. մայիսի 17-ին http://www.aravot.am/2012/05/17/71465/ աղբյուրում հրապարակված «ՀՀԿ-ականները պաշտպանության տակ են առնում պայթեցնողներին-2» փաստաթղթում: Փաստաթուղթը պատկանում է «Հայոց աշխարհ»-ին և լրագրողի անունը նշված չէ: Փաստաթուղթը ստեղծվել է բոլոր նրանց համար, ովքեր չեն հանդուրժում նույնասեռականներին կամ նրանց համար, ովքեր դեռ հստակ վերաբերմունք չունեն նրանց հանդեպ և կարող է ձևավորվել:

Փաստաթղթի հիմնական հաղորդագրությունները հետևյալն են.

1.Արտահայվում է նույնասեռականների հանդեպ անհանդուրժող վերաբերմունք և՝ քաղաքացու, և՝ կուսակցության, և՝ հասարակության դիրքից: Նրա խոսքից մեջբերում. «Բոլոր նրանք, ովքեր փորձում են իրենց պաշտպանության տակ առնել մեր հասարակությունը այլասերող համասեռամոլներին, պղծում են հայերիս ազգային նկարագիրը: Ես, որպես Հայաստանի քաղաքացի եւ ազգային-պահպանողական կուսակցության անդամ, միանգամայն ճիշտ ու արդարացված եմ համարում երկու հայ երիտասարդների ընդվզումը մեր երկրում այլասերության որջ ստեղծած եւ հասարակությունն իր բարոյական արժեքներից հեռացնելու նպատակ ունեցող համասեռամոլների դեմ: »:

2. Շարմազանովը դեմ է արտահայտվում կոնկրետ քաղաքական գործչի, ով պաշտպանել է DIY ակումբի անդամներին, կողքին է կանգնել: Նա ասել է. «Իսկ մարդու իրավունքների այն պաշտպաններին, ովքեր այս միջադեպի առիթով ջանում են էժան դիվիդենտներ շահել, կոչ եմ անում՝ պաշտպանել նախեւառաջ համամարդկային ու ազգային արժեքները»:

Փաստաթուղթը գրվել է ա/նույնաեռականության երևույթը քննադատելու համար, բ/Ռաֆֆի Հովհաննիսյանի դեմ թշնամանք սերմանելու և գ/ ՀՀԿ կուսակցության և իր բացասական վերաբերմունքը հանրությանը հայտնելու համար:

[23] Տե՛ս http://www.panorama.am/am/interviews/2012/05/15/minasyan-about-comak/

Մեկնաբանությունների քանակը՝ 3 է, դուր է եկել 253 անձանց www.facebook կայքի միջոցով ու ընթերցվել է 1433 անգամ:

Հայ միասեռականների եւ լեսբուհիների ասոցիացիան դատապարտում է DIY ակումբի պայթեցումը եւ կոչ է անում «պաշտոնանկ անել» Արծվիկ Մինասյանին: Նման անվանումով հոդված[24] կարելի է գտնել հայկական համացանցում: Փաստաթղթի ամսաթիվը՝ մայիս 17, 2012: Փաստաթղթի հեղինակը նշված չէ:

Փաստաթուղթն առաջնահերթ ստեղծվել է հոգուտ ԼԳԲՏ անձանց և նրանց պաշտպան կազմակերպությունների:

Հոդվածի 3 կարևոր կետերը, որոնք հեղինակը փոխանցում է.

Նյու-Յորքում գտնվող «Հայ հոմոսեքսուալների եւ լեսբուհիների ասոցիացիան» (ՀՀԼԱ) դատապարտում է DIY բարի պայթեցումը մայիսի 8 -ին եւ դրան հետեւած ատելության քարոզչությունը:

Հայտարարության մի առանձին հատված է ուղղված ՀՅԴ պատգամավոր Արծվիկ Մինասյանի դեմ և իրենց հայտարարությունում առաջարկում են նրան պատժելու տարբերակներ կամ ՀՅԴ-ի կամ ԱԺ-ի կողմից: Ասվածի մասին են փաստում հետևյալ խոսքերը. «ՀՀԼԱ-ն զարմանում է, որ մինչեւ օրս ոչ ՀՅԴ-ն ոչ ՀՀ կառավարությունը որեւէ հետաքննություն չեն սկսել Արծվիկ Մինասյանի ասածների կապակցությամբ: Ասոցիացիան անգամ կոչ է անում ՀՅԴ-ին եւ Ազգային ժողովին՝ նկատողություն անել Մինասյանին, պաշտոնանկ անել կամ առաջարկել, որ հրաժարական տա՝ կոնֆլիկտ հրահրելու եւ մարդկանց կյանքին վտանգ սպառնալու համար, առավել ևս որ Մինասյանը, ըստ ՀՀԼԱ-ի, շարունակում է ճչացող հոմոֆոբիկ հայտարարություններ անել՝ ՀՅԴ դրոշի ներքո:»

Հայտարարության մեջ նաև նշված է, որ մայիսի 17 – ին, Հոմոֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը, ՀՀԼԱ-ն իր զորակցությունն է հայտնում Հայաստանում գործող մի շարք կազմակերպությունների, որոնք պայքարում են փոքրամասնությունների իրավունքների համար, ինչպես նաեւ հայտարարում է իր անմնացորդ աջակցությունը՝ Հայաստանում վտանգավոր պայմաններում բնակվող ԼԳԲՏ համայնքին:

Վերոնշյալ նյութը ստացել է 2 մեկնաբանություն, 18 «Like» www.facebook.com սոցիալական ցանցի միջոցով ու դիտվել է 945 անգամ:

Ավելի ուշ, 2012 թ. մայիսի 21-ին, «Ժառանգություն» խմբակցության քարտուղար, Հայաստանի մարդու իրավունքների առաջին պաշտպան Լարիսա Ալավերդյանի կողմից արտահայտվեց կարծիք, որ Երեւանի DIY ակումբի պայթեցման շուրջ աղմուկով

[24] Տե՛ս http://www.aravot.am/2012/05/17/71695/

ստեղծում են Ադրբեջանում «գեյ-շքերթի» հակակշիռը. «Այս ամենը ստեղծված է նրա համար, որ ցույց տան, թե միասեռականների նկատմամբ բացասական վերաբերմունքը ոչ միայն Ադրբեջանում է, այլեւ Հայաստանում: Նրանք այն ուժերն են՝ միջազգային կազմակերպությունները, որոնք քարոզում են միասեռականությունը: Ուզում են հավասարեցնել Ադրբեջանին, Իրանի ֆունդամենտալիստներին, որ ցույց տան, թե Հայաստանում նույնն է և իրենց չափանիշներով՝ ժողովրդավարական չէ, Ադրբեջանից ոչնչով չի տարբերվում»: Հոդվածի աղբյուրը՝ http://www.aravot.am/2012/05/21/72620/, հոդվածի հեղինակ՝ Արփինե Սիմոնյան: Այդ նյութը դիտվել է 280 անգամ և դուր է եկել 7 հոգու www.facebook.com սոցիալական ցանցի միջոցով: Մեկնաբանությունները բացակայում են: Փաստորեն, ըստ՝ Լ.Ալավերդյանի՝ ակումբի պայթեցումն ունի զուտ քաղաքական պատճառներ և հետապնդում է նույնասեռականների հարցում Հայաստանը Ադրբեջանին հավասարեցնելու նպատակը:

ՀԱՄ-ի աղբյուրում(http://www.hayary.org/wph/?p=2556, որը հայտնի է ԼԳԲՏ անձանց հանդեպ անհանդուրժողական մոտեցմամբ, Անի Մարությանի կողմից լուսաբանված հոդվածում առաջարկվում է ակումբի պայթեցման այլ պատճառներ: Մի հատված կմեջբերվի. «Երբ մայիսի 8-ի առավոտյան պայթեցրեցին Ծոմակ Օգանեզովային պատկանող «DIY» ակումբը, կրկին արդիականացվեց համասեռականների թեման: Սա երկու ե-րես ունի մեր կարծիքով՝ կամ դրսի ուժերին հանգիստ չի տալիս այս եւ նմանատիպ թեմաների լռությունը, քանզի ճնշումները Հայաստանի վրա նաեւ այս ուղղությունից են սնվում, կամ երկրի ներսում գործող որոշակի ուժեր սեփական շահերն են հետապնդում: Վերջինն ինքն էլ իր հերթին երկու կողմ ունի: Մեկն այն է, որ ոմանց միջազգային դրամաշնորհները խիստ պակասել են եւ աղմուկ է պետք՝ այսպես կոչված աջակցություն, մյուսն էլ այն է, որ ոմանց պետք էր շտապ քաղաքական խնդիր լուծել՝ ԱԺ ընտրություններից հետո սասանված դիրքերն ամրապնդելու համար: Բայց հետաքրքիր է, որ հիշյալ ծավալումներից հետո բոլորն էլ վստահ են, որ սա ատելության նշան է: Սա էլ երկու ծայր ունի, այն, որ ատելություն կա հանրության ներսում սեռամոլագարական դրսեւորումների հետ կապված, նորություն չէ, եւ մոլագարությունների դեմ հանդես եկող հանրությունը դեռ առողջ է: Մյուս ծայրում՝ իբր խեղճ ու կրակ, բայց իրականում ագրեսիվ եւ օտարահաճ մի զանգված է, որ ամեն գնով փորձում է ինչ-որ փոքրամասնության իրավունքներ փաթաթել մեծամասնության վզին»: Հատվածի ընթերցումից հետո կարելի է եզրակացնել, որ.

1.Լրագրողը բացասական է տրամադրված նույնասեռականների և նրանց սեռական կողմնորոշման հանդեպ:

2.DIY ակումբի պայթեցման սկզբնաղբյուրը նույնացնում է կա՞մ արտաքին, կա՞մ ներքին ուժերի հետ:

3.Նշում է, որ ամեն դեպքում որպես արդյունք պետք է նշվեր, որ նույնասեռականների հանդեպ կա ատելություն:

Հետաքրքրական են նաև տեսանյութերը: «Պայթեցրել են DIY փաբը» անվանումով տեսանյութը[25] հրապարակվել է 2012 թ. մայիսի 8-ին CivilNetTV-ի կողմից: Դիտումների քանակը կազմում է 13326, որը համեմատաբար այլ տեսանյութերի բավական մեծ թիվ է:

[25] Տե՛ս http://www.youtube.com/watch?v=PvGtqaEqmhc&feature=player_embedded

Դուր է եկել 17 հոգու, իսկ դուր չի եկել 31-ին: Փաստաթուղթը կոնկրետ, տարբերակված լսարանի համար նախատեսված չէ: Ներկայացվող տեղեկատվությունը բովանդակային առումով տեղավորվում է ներքոհիշյալ կետերի մեջ.

- Տեսանյութում Ծոմակը նշում է, որ ունեն փաստեր, որոնցում երևում են մասնակիցները, ովքեր պայթեցրել են բարը ու նկարագրում է նրանց գործողությունները:
- Ծոմակի խոսքերով առավոտյան 6-ից մինչև «էս ժամ» ոստիկան չի եկել, այսինքն՝ եկել են կարճ ժամանակով ու գնացել, ոչ մի աշխատանք չեն իրականացրել:
- Նա վստահ է, որ սա ատելության նշան է՝ դրսևորված որոշ մարդկանց կողմից:
- Նա իր աջակցության խմբի հետ մեկտեղ պայքարելու է: Իր խոսքից մի հատված. «… ու մենք ոչ մեկին հանգիստ չենք թողնի, մինչև ամեն մարդ իրա արածի համար պատասխան չտա, շուտով Ֆեյսբուքով կդնենք, թե ովքեր են…»:

www.1in.am հեղինակ՝ Արաքս Մարտիրոսյանի կողմից պատրաստված «Ինչու՞ են պայթեցրել DIY ակումբը» տեսանյութը[26] դիտվել է 8899 անգամ, դուր է եկել 23 օգտատիրոջ ու դուր չի եկել 60-ին:

Այդ տեսանյութում ևս ներկայացվում է Ծոմակի հետ հարցազրույց.

1.Նա պատմում է, թե ինչպես են պայթեցրել և երբ:

2. Պատմում է, որ իրենք ունեն թշնամիներ, որոնք պատկանում են թշնամական խմբի կամ կազմակերպության:

3.Ըստ նրա՝ այդ գործողություններն ուղղված են ընդդեմ իրեն՝ պայմանավորված իր ոչ ավանդական սեռական կողմնորոշմամբ:

4.Նա պնդում է, որ դա նույնասեռականների հավաքատեղի չի եղել: Ծոմակի խոսքերով. «կարևոր, հետաքրքիր գաղափարներ ունեցող մարդկանց հավաքատեղի է»:

5.Նա նույնացնում է երկու հոգու և համոզված է, որ ավելին են ու հավելում. «…մի քանի հոգի, թե իրանց գլխավորող անձը, ամբողջ իրանց խումբը մենք վերացնելու ենք, ոչ թե սպանելու ենք, այլ իրանք կլինեն անհասանելի մեր հասարակության համար, կարող է 10- են, 20- են, 30 են, իրանք շատ են……»: «Սրանք ուրեմն փաստորեն կարան լինեն պատվերով աշխատող ինչ որ մարդիկ, զուտ ազգայնական ուղղություններով ունեցող, ֆաշիստական և նացիստական գաղափարախոսության խմբերի թեկուզ երևի կազմակերպության: Ես այսպես ասած ահաբեկիչների ծանոթ չեմ եղել, բայց….»:

Այս տեսանյութից երևում է Ծոմակի միանշանակ բացասական վերաբերմունքը պայթեցնողների, կազմակերպիչների դեմ ու նա վստահ նշում է, որ պայքարելու են իր հակառակորդների դեմ: Սակայն նկատելի է, որ Ծոմակն ունի փաստերի պակաս:

Կարելի է դիտարկել նաև Պետրոս Ղազարյանի հետ Ծոմակի հարցազրույցից վերցված հատվածները, որոնց հիման վրա պատրաստվել է տեսանյութ[27]: Տեսանյութի անվանումը՝ «ծոմակը և իր ապազգային մտքերը, (DIY ակումբի իրական դեմքը)»: Հրապարակման ամսաթիվը՝ 21.05.2012, օգտատեր՝ TheGloomyDeath, դիտումների քանակը՝ 5025, դուր է եկել 12 հոգու և դուր չի եկել 40-ին:

[26] Տե՛ս http://www.youtube.com/watch?feature=endscreen&NR=1&v=Ct5qPyik51o
[27] Տե՛ս http://www.youtube.com/watch?v=G9PwTEQY1BE&feature=related

Ծոմակի համոզմամբ իրեն ատում են և ատելության պատճառը հետևյալն է. «Որովհետև ես գնացել եմ Թուրքիա անցած տարի և ընդեղ համերգ եմ տվել, ես գնացել եմ ընդեղ ներկայացրել եմ Հայաստանի մշակույթը»: Այդ խոսքից հետո ցուցադրվում են նրա Թուրքիայի լուսանկարները:

Ծոմակը հավելում է, որ Թուրքիայում ծանոթացել է հայ համայնքի հետ կապված թուրք հայերի հետ:

Ծոմակի խոսքը, որը բնութագրում է հայ ազգին. «Գիտեք ոնց, հայ, հայ, հայ, արդեն հոգնեցինք ասելով, մի պուճուրիկ ազգ ենք, էն ել մեզնից ոչ մի բան չենք ներկայացնում, սարքել ենք մեզանից ես իմ ինչ»: Եվ այս մեկը. «Դե մեր ազգին պետքա բուժել, միանշանակ, պետքա բուժել, պետքա բուժել, պետ ք ա բու ժեեել»:

Նրա պնդմամբ՝ բարը երբևէ միասեռականության գաղափար չի կրել իր մեջ, այն եղել է սովորական ակումբ, որտեղ եկել են տարբեր մարդիկ:

Ծոմակի կողմից արտահայտվել է ևս մեկ միտք, որ փոքր ազգերը պետք է միանան խոշոր ազգերին. «12 տարի էլ ես էս երկրի համար պայքարում եմ, իմ ընկերների հետ միասին, ես ընդհանրապես հայ ժողովրդի հետ կապ չունեմ, ինձնից շատ, էլի եմ ասում, չի ցավում 15 թվի եղածի , թե ինչա եղել, ահ, փոքր ազգերը, հակառակը, պետքա ձուլվեն, 12 տարի էլ ես էս երկրի համար պայքարում եմ»:

Տեսանյութի ընթացքում երբեմն ցուցադրվել են Ծոմակին և նրա ընկերներին ծաղրող լուսանկարներ:

Նույն նյութը՝ պարզապես «ծոմակի ստերը» անվանման ներքո կարելի է գտնել այլ հասցեում[28]: Հրապարակված է 22.05.2012 ArmenianNational օգտատիրոջ կողմից: Այն ապահովել է 4453 դիտում: Նկարագրությունն այսպիսին է. Ծոմակը և իր ապազգային մտքերը: DIY ակումբի իրական դեմքը ... ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ մեկնաբանությունները գրաքննության չեն ենթարկվում :) խոսքի ազատություն ա :): Դուր է եկել 17 օգտատիրոջ և դուր չի եկել 17 օգտատիրոջ:

Քանի որ խոսք գնաց Թուրքիա կատարած նրա ռոք խմբի այցի մասին, ապա այդ ճանապարհորդության մասին ևս կան տեսանյութեր տեղադրված ինտերնետային www.youtube.com – ում:

Այժմ անցում կկատարվի նույն տեսանյութի դիտմանը, որը տեղադրված է www.youtube.com կայքի տարբեր հասցեներում ու պատմում են Ծոմակի և նրա թիմի Թուրքիա կատարած այցի մասին:

N1http://www.youtube.com/watch?feature=endscreen&v=IyU0Eq18oF0&NR=1

Տեսանյութի անվանումը՝ «ծոմակը թուրքիայի գեյ շքերթում»: Հրապարակված է 12.05.2012, օգտատեր՝ vishapakahr: Նկարագրությունը՝ Պայքարենք Հայաստանում այլասերման տարածման դեմ: Դիտումների քանակ՝ 16542: Դուր է եկել 28 օգտատիրոջ, դուր չի եկել 110-ին:

Տեսանյութը իր մեջ պարունակում է մի քանի ելակետային հաղորդագրություններ, որոնք ներկայացվում են սև ֆոնի վրա, իսկ հաղորդագրությունների տառերը սպիտակ են:

[28] Տե՛ս http://www.youtube.com/watch?NR=1&feature=endscreen&v=o7hEPMXDEVg

Տեսանյութը կազմված է նաև Թուրքիայում կատարված լուսանկարներից: Այդ հաղորդագրությունները հետևյալ հաջորդականությամբ են ներկայացված տեսանյութում:

1.«2011 թվականին Հայաստանից թուրքիա մեկնեց համասեռամոլների մի խումբ կենդանիներ, որպեսզի մասնակցեն թուրքիայում անցկացվող գեյ շքերթին» :

2. «Նայեք այս խայտառակ թափթփուկներին»:

Նկարներից մեկում նման մեկնաբանություն էր կատարված՝ «Թուրքի ծնկներին հենված «Հայ»Պոռնիկը»: Նկարը վերցված է Facebook սոցիալական ցանցից:

3.«Այսօր նրանք փորձում են տարածել այդ ախտը Հայաստանում»:

4.«Եթե չվերացնենք այս կեղտը ՀԻՄԱ, ապա տարիներ հետո այս կեղտն է մեզ վերացնելու»:

Տեսանյութին հաջորդել են 7 մեկնաբանություններ:

N2 http://www.youtube.com/watch?v=Z6t7LdI3Xd0

Տեսանյութի անվանում«Հայ» անառակները թուրքիայում: Դիտումների քանակը՝ 2104: Դուր է եկել 4 օգտվողի, դուր չի եկել 28-ին: Հրապարակվել է 2012 թ. մայիսի 13-ին օգտատեր AzgaynakanHay –ի կողմից:

Տեսանյութ N3 http://www.youtube.com/watch?v=o2c7h0aPkNw&feature=related

DIY ակումբի այլանդակները թուրքիայում: Հրապարակված է 13.05.2012 ամսաթվին օգտատեր Armen Manukyan-ի կողմից: Դուր է եկել 15-ին, դուր չի եկել 48-ին: Դիտումների քանակը՝ 5959

Ստացվում է, որ նույն տեսանյութն ապահովել է տարբեր քանակությամբ դիտումներ: Այդ տեսանյութը ցուցադրում է ստեղծողի և տարածողների հակակրանքը Ծոմակի, նրա թիմակիցների ծավալած գործունեության մասին Թուրքիայում: Վերջին հաղորդագրությունն ինքնին կոչ է՝ խոսքից գործին անցնելու, կոնկրետ քայլեր ձեռնարկելու:

Մեկ այլ աղբյուրում[29] Երկիրմեդիա հեռուստաընկերության կողմից մեկնաբանվել է Ծոմակի ռոք խմբի այցը Թուրքիա 2011 թվականի հուլիսի 25-ին «HAY SEXSUAL POQRAMASNUTYUNNER@ TURQIAYUM» անվանումով: Դիտումների թիվը 10 941 է: Դուր է եկել 8 օգտատիրոջ և դուր չի եկել 36-ին: Տեսանյությում ներկայացվում է, որ Ստամբուլում անցկացված գեյ շքերթին մասնակցել է 4 հայ, ովքեր ներկայացնում էին Պինցետ աղջիկների ռոք խումբը: Ներկայացվում է Ծոմակի հետ հարցազրույցը, ով Թուրքիայում եղել է մի քանի անգամ և ամեն անգամ ձեռք է բերել նոր ծանոթներ, արժանացել է ջերմ ընդունելության: Մեջբերում. «Իրականում էնտեղ ամեն ինչ շատ լավ էր ու մենք որոշեցինք հայ-թուրք հարաբերությունների թեմայով էնտեղ շատ չխորանալ»: Տեսանյութում նաև ցուցադրվում է լրագրող Արփի Բեգլարյանի կարծիքը այդ ռոք խմբի ու Թուրքիայից Հայաստան վերադառնալիս նրանց հայտարարության մասին, որն ընդունելի չէ լրագրողի կողմից: Խոսքն այն մասին է, որ Ծոմակը հասցրել է դժգոհել վերադառնալուց հետո հայկական խմբագրատանը, որ Երևանում նման շքերթի անցկացումը հեռավոր երազանք է: Քանզի ըստ Ծոմակի՝ Թուրքիայում նույնասեռականներն առավել ազատ են, քան Հայաստանում: Տեսանյութից երևում է, որ զուտ հայտարարության հանդեպ կա

[29] Տե՛ս http://www.youtube.com/watch?NR=1&feature=endscreen&v=Tj_zSnEzIl8

անընդունելի մոտեցում, իսկ ընդհանուր առմամբ, նրանց այցը Թուրքիա ներկայացվում է չեզոք կերպ, Պինցետը՝ որպես ռոք խումբ դրական լույսի ներքո:

Նախորդ տեսանյութը կա նաև այլ աղբյուրում[30]: Տեսանյութը կոչվում է այսպես. «Տխրահռչակ Ծոմակն ու նրա Հակահայ քարոզը Թուրքիայում»: Հրապարակված է 2012 թ. մայիսի 10-ին օգտատեր Bnaban Am –ի կողմից: Դիտումների քանակը 12627 է: Դուր է եկել 12 օգտատիրոջ և դուր չի եկել 101-ին:

Պետք է նշել, որ Ծոմակը և իր ընկերները նույնպես ունեն զցված տեսանյութեր www.youtube կայքում, որոնք ունեն նույնասեռականների իրավունքները պաշտպանող բնույթ: «Մասնավորապես խոսքը գնում է Ֆաշիստների ինքնախոստովանությունը_17.05.2012» անվանումով տեսանյութի մասին, որը հրապարակվել է 2012 թվականի մայիսի 17 ին, ապահովել է 15119 դիտում: Տեսանյութը դուր է եկել 36 հոգու և դուր չի եկել 71 հոգու: Հրապարակման ամսաթիվն է 17.05.2012, օգտատեր Arman Veziryan-ի կողմից:

Նկարագրությունն այսպիսին է. տեսանյութը © Հելսինկյան Ասոցիացիայի video by © HELSINKI ASSOCIATION

Ամեն օր շարունակվում են ֆաշիստական խմբավորումների հարձակումները DIY ակումբի սեփականատեր արվեստագետ Ծոմակի վրա: Ոստիկանությունը չի արձագանքում քաղաքացիների ահազանգներին:

Հետաքրքիր փաստ էր, որ նյութը զցված է «կենդանիներ» կատեգորիայի ներքո:

Տեսանյութի բովանդակությունը բավական պարզ է: 3 հայ երիտասարդներից հարցազրույց է վերցվում Երկիր մեդիա հեռուստաընկերության լրագրողի կողմից: Երիտասարդները դեմ են արտահայտվում ակումբում Ծոմակի և իր համախոհների ծավալված գործունեությանը ու նշում են, որ իրենք իրենց ընկերների հետ մեկտեղ որոշ գործողություններ են իրականացրել ընդդեմ ակումբի. Օրինակ՝ նշաններ են նկարել, թքել են ակումբի վրա, Ծոմակն ու իր համախոհները պաստառներ են կպցրած եղել «ֆաշիստներ» անվանումով, իսկ իրենք այրել են դրանք ու դրա մասին խոստովանում են և' հեռուստաընկերության տեսախցիկի առջև ու խոստովանել են նաև ոստիկանությունում: Երիտասարդները ակումբի հրդեհման հետ կապ չունեն, սակայն մասնակցել են երկրորդ հարձակմանը: Այդ նյութի զցման միջոցով Հելսինկյան ասոցիացիան ցանկանում է ցույց տալ, թե ինչպիսի բացասական վերաբերմունք կա ՀՀ-ում նույնասեռականների հանդեպ, ինչպիսի ատելություն և ինչպիսի գործողությունների են պատրաստ դիմել ի հակադրություն նրանց: Սակայն երիտասարդների գործողություններում որոշիչ դեր են կատարել զգացմունքները:

Այսպիսով, հասկանալի է, որ զուտ DIY ակումբի հրդեհման հետ կապված փաստեր չեն ներկայացվում նյութերում, սակայն տարբեր կողմեր առաջ են քաշում վարկածներ, որոնց հիմնավորումը իրենք չունեն:

[30] Տե՛ս http://www.youtube.com/watch?v=PKMNx_s_ZVA&feature=related

Բազմազանության երթը և դրան հաջորդած իրադարձությունների սոցիալական ընկալումների առանձնահատկությունները

«Եթե ուզենայինք գեյ-շքերթ անել, բառացի կասեինք. կազմակերպիչները հերքում են, որ երթը միասեռականների համար է» անվանմամբ 2012թ. մայիսի 21-ին հրապարակված է հոդված[31]: Փաստաթուղթը ստեղծվել է Թերթ.am-ի կողմից ու լրագրողի անուն հիշատակված չէ: Ավելի շուտ հոդվածն ունի տեղեկացնող բնույթ և հատուկ լսարանի համար նախատեսված չէ: Ինչ նպատակով է ստեղծվել նյութը: Առաջին պատճառը եղել է այն, որ ըստ «Pink Armenia»-յի՝ «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի նախագահ Մամիկոն Հովսեփյանի՝ մշակութային բազմազանության համաշխարհային օրվա առիթով մայիսի 21-ին Երևանում նախատեսված երթը բոլորովին կապ չունի գեյ-շքերթի հետ: Երթը նախատեսված է մարդկանց համար, ովքեր որ բազմազանությունն ընդունում են, հարգում են և հասկանում, որ բազմազանությունն ընդամենը կյանքի դրական կողմն է: «Ես զարմանում եմ, ինչու մարդիկ չեն հասկանում բազմազանության և գեյ-շքերթի տարբերությունը: Եթե ուզենայինք գեյ-շքերթ անել, բառացի կասեինք գեյ-շքերթ է: Մենք այդ բառից չենք վախենում, բայց ոնց հասկանում ենք, այս ազգը կարիք ունի գեյ-շքերթի, քանի որ նման պրովոկացիաներ են անում»,- ասաց նա և ավելացրեց, որ ամեն դեպքում նման երևակայություն ունեցողներին ստիպված է հուսախաբ անել:

Նյութը գրելու հաջորդ շարժառիթը կապված է նրա հետ, որ Facebook–ում, սակայն, ակտիվորեն քննարկվում է, որ այս երթն իրականում գեյ–շքերթ է, որի նպատակն է ցույց տալ Հայաստանում առկա բազմազանությունը: Հոդվածից մի հատված. «Նշենք, որ Facebook–ում, սակայն, ակտիվորեն քննարկվում է, որ այս երթն իրականում գեյ–շքերթ է, որի նպատակն է ցույց տալ Հայաստանում առկա բազմազանությունը»:

Այսպիսով, ստացվում են երկու միմյանց հակասող տեսակետներ: Կազմակերպիչները այն համարում են մշակութային բազմազանության երթ, իսկ հակառակ կողմը՝ որպես նույնասեռականների շքերթ:

Բազմազանության շքերթի հետ կապված կարելի է ներկայացնել Շանթ հեռուստաընկերության պաշտոնական կայքում առկա ինֆորմացիան: «Ովքե՞ր են իրականում բազմազանները» անվանումով նյութը հայտնվել է 2012 թ. մայիսի 21-ին լրատվության խորագրի ներքո: Դիտումների քանակը 331 է: Գցված է տեսանյութ և տեսանյութին կից համապատասխան տպագիր ինֆորմացիա, որն է. «Երևանում այսօր նախատեսված այսպես կոչված մշակութային «Բազմազանության երթը» չի կայացել: Այն ուղեկցվել է մոտ հարյուր հայ երիտասարդների բողոքի ակցիայով, ովքեր Երևանի կենտրոնում երթ են կազմակերպել, այդ կերպ արտահայտելով իրենց բացասական վերաբերմունքը համասեռամոլների հանդեպ: Երիտասարդները վանկարկել են «Ոչ գոմիկներին», «Զգուշացեք հոգևարակներից» և կրել են նույնաբովանդակ պաստառներ:

[31] Տե՛ս http://tert.am/am/news/2012/05/21/gey-party-armenia/

Հիշեցնենք, որ այսօր ողջ օրը սոցիալական ցանցերում հաղորդվում էր, որ «Բազմազանության երթն» իրականում գեյ շքերթ է: Տեսանյութից երևում է, որ մի խումբ տղաներ նախ բղավում են «ամոթ, ամոթ, ամոթ, իսկ այնուհետև շարունակում հետևյալ կերպ. «Հայաստանից դուրս, Հայաստանից դուրս»:

Պարզ է, որ կրկին բազմազանության երթը նույնացվում է նույնասեռականների շքերթի հետ և խոսվում է այն մասին, որ հայ մի խումբ երիտասարդներ փորձել են խանգարել նրանց շքերթին հիմնականում խաղաղ միջոցներով: Եվ իհարկե վանկարկումներն արտացոլում են անհանդուրժողական մոտեցումը նույնասեռականների հանդեպ:

Ինչպե՞ս են մեկնաբանում դեպքերի ընթացքը բուն հակակցիայի մասնակիցները:

Դիտենք 2012 թ. Մայիսի 22-ին Թերթ.am-ի «Բազմազանության երթի» դեմ ակցիան ինքնաբուխ էր, ասում են հակաակցիայի մասնակիցները» հոդվածը[32]:

Այժմ կթվարկվեն 3 կետեր, որոնք կարևորվում են հեղինակի կողմից.

- «Բազմազանության երթ»-ի դեմ կազմակերպված հակաակցիան ինքնաբուխ էր:
- «Բազմազանության երթ»-ի անվան տակ նույնասեռականների շքերթ է կազմակերպվել:
- Շքերթի ժամանակ ևս նույնասեռականություն է քարոզվել:

«Նույնը կատարվում է նաև պետության սոցիալ-քաղաքականության հետ. Վրաստանում՝ հայկական մշակույթի ոչնչացման դեպքում հանդուրժող եղանք, արդեն նաև համասեռամոլների ու հազար ու մի գրանտակերների դեպքում ինչքա՞ն պետք է հանդուրժող լինենք, այնքա՞ն, որ մենք դառնանք սեռական փոքրամասնությո՞ւն, նրանք՝ մեծամասնությո՞ւն»,-հարցրեց Սարիբեկյանը:

Բանախոսները նշեցին, որ չեն կարող ասել, թե ինչ կապ կա վերջին շրջանում՝ տարածաշրջանում նույնասեռականության թեմայի ակտիվացման հետ, սակայն կաշխատեն ներսի հակազդեցության վրա:

2012 թ. Մայիսի 23-ին Ռադիոլուրի լրագրող Լիանա Եղիազարյանի կողմից հրապարակվել է «Սոդոմ Գոմորից մինչեւ Մշակութային բազմազանություն» հոդվածը: Հոդվածը կոնկրետ տարբերակված լսարանի համար նախատեսված չէ: Փաստաթղթում առաջարկվող կարևոր կետերը հետևյալն են.

1.Այն, որ նույնասեռականությունը մերժելի երեւույթ է:

2. Նույնասեռականների մեջ կա մի հատված, որն ուզում է ուղղվել, քանի որ նրանք տանջվում են թե' ներքին կոնֆլիկտից, թե' արտաքին, սակայն նրանց հիմնական մասն իրենց խանգարումները չեն ընկալում որպես այդպիսին և չեն ցանկանում ուղղվել:

3. Նույնասեռականությունը կործանիչ հետևանքներ կարող է ունենալ և հիշատակվում է, որ ըստ Աստվածաշնչի՝ Սոդոմն ու Գոմորը հենց այսպիսի արատավոր բարքերի

[32] Տե՛ս http://www.tert.am/am/news/2012/05/22/discussion-gay-parade/

պատճառով կործանվեցին: Նաև տեքստում նշվում է հոգեբան Սամվել Խուդոյանի միտքը, որ համասեռամոլությունը աշխարհի գերբնակեցման դեմ ուղղված քայլ է, իսկ Հայաստանի դեպքում վերածվում է ազգային անվտանգության խնդրի:

4. Այս երեւույթի ամենավտանգավոր կողմերից մեկն էլ դրա քարոզչությունն է: Այնինչ Հայաստանում կազմակերպություններ կան, որոնք ֆինանսավորվում են արտաքին ուժերից եւ ուզած-չուզած՝ հենց հոմոսեքսուալիզմ էլ քարոզում են: Սակայն եվրոպական կեղծ դիմակները մեզ սազական չեն: Այդպիսի մարդկանց ուղղակի անտեսել է պետք, նրանց ընդունել որպես «ուրիշների»: Այս համոզմանն է հոգեբույժ Սամվել Սուքիասյանը:

5.Այս մարդիկ հոգեբանական, հոգեբուժական, հոգեւոր օգնության կարիք ունեն.

Ինչո՞ւ է գրվել այս փաստաթուղթը.

- ընթերցելուց հետո որոշ մարդիկ խորհեն ու հասկանան, որ դա մեղք է.
- եթե զբաղվում են նույնասեռականության քարոզչությամբ, ապա դադարեցնեն,
- եթե իրենք իսկ նույնասեռական են, ապա ընտրեն դարձի ուղին,
- եթե նորմալ սեռական կողմնորոշում ունեն, ապա փորձեն բացասաբար տրամադրվել այդ երևույթի դեմ:

Հարցեր, որոնց պատասխանը հեղինակը չի տվել փաստաթղթում.

Այն, թե ինչպես է անցել մշակութային բազմազանության շքերթը և ինչու այն համարել զուտ նույնասեռականների կողմից ձեռնարկված քայլ:

Ինտերնետում 2012 թ. մայիսի 22-ին «մեդիամաքս» լրատվական գործակալության կողմից ««Բազմազանության», համասեռամոլության եւ քառսային ասուլիսի մասին» անվանումն ունեցող հոդվածն[33] է հրապարակվել: Դիտումների քանակը՝ 543 է:

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ ներկայացուցիչը փորձել են պարզաբանումներ տալ շքերթի հետ կապված: «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ Գոհար Շահնազարյանն ասել է, որ իրենց կազմակերպած «Բազմազանության շքերթը» ապատեղեկատվության հետևանքով վերածվել է քառսի:

Նրա խոսքերով, իրենց նպատակն է եղել ներկայացնել Հայաստանում առկա մշակութային բազմազանությունը, սակայն միջոցառումը որակվել է որպես «գեյ շքերթ»: «Մեր կազմակերպությունը հրավիրել էր Հայաստանում բնակություն հաստատած իրաքցի կին փախստականներին, ովքեր հոգեբանական հարմարման խնդիր ունեն, որպեսզի պատմեին իրենց խնդիրների մասին»,-ասել է նա: Միաժամանակ նա նշել է, թե տեղյակ չէ՝ արդյոք շքերթի մասնակիցների շարքում կային նույնասեռականներ:

Երբ լրագրողները փորձել են ճշգրտող հարցերի միջոցով պարզել, թե ինչպես ստացվեց, որ խաղաղ շքերթին դեմ դուրս եկան նույնասեռականությանը դեմ արտահայտվող հարյուրավոր մարդիկ, Հելսինկյան ասոցիացիայի նախագահ Միքայել Դանիելյանը զայրացած շտապել է դուրս գալ դահլիճից ու հավելել, որ «սա դասախոսություն չէ»:

Այս նյութից կարելի է եզրակացնել, որ կազմակերպիչների պնդմամբ իրենք չեն կազմակերպել նույնասեռականների շքերթ, սակայն միաժամանակ չեն կարող բերել կոնկրետ փաստեր՝ հավաստող իրենց խոսքերը:

[33] Տե՛ս http://www.mediamax.am/am/news/society/5044/

2012 թ, մայիսի 25-ին, News Armenia TV օգտատիրոջ կողմից համացանցում հայտնվել է փաստաթուղթ[34], որը սերմանում է հանդուրժողականություն նույնասեռականների հանդեպ:

Փաստաթղթի ստեղծմանը մասնակցել են Ազնիվ Կարապետյանը ու Նարեկ Եղիազարյանը: Տեսանյութը «Ժամը լրատվական» հաղորդման համար է:

Տարբերակված լսարան չկա, հաղորդագրությունն ուղղված է ցանկացած քաղաքացու:

Հիմնական կետերը, որոնք հաղորդվում են դիտողին:

1.Կարեն Անդրեասյանն ափսոսում է, որ մեր երկրի իմիջը կրել է փոփոխություն՝ կապված նույնասեռականության և նույնասեռականների հանդեպ վերաբերմունքից:

Մասնավորապես նա ափսոսում է DIY ակումբի միջադեպի ու հետագա մեկնաբանությունների համար, որոնք ազդել են մեր երկրի իմիջի վրա, քանզի այնպիսի տպավորություն է ստեղծվել, թե այստեղ ճնշում են գեյերին ու լեսբուհիներին: «Չի կարելի մի քանի անձանց կողմից արտահայտված բացասական թերևս անընդունելի տեսակետները բացասական ազդեցություն ունենան մեր ամբողջ հասարակության իմիջի վրա»,_նշում է նա:

2.Մարդու իրավունքների պաշտպանը կոչ է անում լինել առավել հանդուրժող նույնասեռականների հանդեպ: «Ամենակարևոր սկզբունքը, որը մեր հասարակությունը պարտավոր է պահպանել այն է, որ բռնությունը և խտրականությունը արգելված են մեր օրենքով, մեր միջազգային պարտավորություններով, մեր Սահմանադրությամբ»,_նշում է Կարեն Անդրեասյանը:

3.Ոչ ավանդական սեռական կողմնորոշում ունեցողներին օմբուդսմենը հորդորում է հարգել ավանդապաշտներին: «Հատուկ պրովոկացիաներով հանդես չգան, որպեսզի տեղի չունենա հատուկ սրում, որի պատճառով մեր հասարակությունը կստացվի առավել անհանդուրժող, քան այն իրականում կա, կամ առավել վայրի, քան այն իրականում կա»:

Տեսանյութը ստեղծելու ակնհայտ պատճառները թերևս երկուսն են.

1.Հայ հասարակությունը առավել հանդուժողական մոտեցում ցուցաբերի նույնասեռականների հանդեպ:

2. Նույնասեռականները իրենց պահեն առավել զուսպ հայ հասարակության շրջանակներում:

Շքերթից և հետշքերթյան քննարկումներից մի քանի օր անց, ավելի կոնկրետ 2012 թ. մայիսի 29-ին մեկ այլ աղբյուրում[35] անանուն լրագրողի կողմից տեղադրվել է «Կրակել են Կոմայգու տրանսֆեստիտների վրա» հոդվածը, որում փոխանցվում է հետևյալ ինֆորմացիան.

Վկայակոչելով News.am-ը՝ հաղորդվում է որ մայիսի 28-ի լույս 29-ի գիշերը օդամղիչ ատրճանակով կրակել են Կոմայգու տրանսֆեստիտների վրա, որոնցից մի քանիսը թեթեւ մարմնական վնասվածքներ են ստացել:

[34] Տե՛ս http://www.youtube.com/watch?v=RiimCXr35eQ&feature=g-all-u

[35] Տե՛ս http://lragrox.blogspot.com/2012/05/blog-post_29.html

Լրագրողն անանուն է և նյութը տեղադրվել է 2012 թվականի մայսիսի 29-ին: Մեկնաբանությունները բացակայում են:

Հաղորդվող տեղեկատվությունն իր բնույթով չեզոք է և պարզապես ներկայացնում է կոնկրետ փաստ:

Այդ դեպքի հետ կապված հումորային տեսանյութ է անգամ պատրաստվել և տեղադրվել համացանցում, ավելի կոնկրետ այս հասցեում http://www.youtube.com/watch?v=MQgKXvB83pk: Դիտումների քանակը՝ 35315: Հրապարակված է 2012 թ.հունիսի մեկին Կենտրոն հեռուստաընկերության կողմից: Թեման «Հայ Գեյեր»: Կատարվում է Տիգրան ''Էմտիկո" Մնացականյանի կողմից: Դուր է եկել 347 օգտատիրոջ և դուր չի եկել 38 հոգու: Նույն երգը կա նաև այս հասցեում՝

http://myconception.wordpress.com/tag/%D5%BF%D6%80%D5%A1%D5%B6%D5%BD%D5%BE%D5%AB%D5%BD%D5%BF%D5%AB%D5%BF/:

Այն ինչը փորձում է հեղինակը տեղ հասցնել մի քանի կետերում.

- Երևանի կենտրոնում ակումբ են պայթեցրել, որի մասին գիտեն անգամ այն մարդիկ, ովքեր հեռուստացույց չեն դիտում:
- Նշում է, որ երեկոյան ժամերին Կոմայգու մոտով համարձակ անցնելը վտանգավոր է, քանզի կարող են կրակել:
- Նշում է, որ նույնասեռականներն էլ են մարդ ու պետք է նրանց չնվաստացնել:
- Նույնասեռականներին համարում է ի ծնե հիվանդ, անկախ իրենց կամքից:
- Այն, որ մենք մտել ենք Եվրոխորհուրդ և դա մեզ համար ենթադրում է նոր երևույթներ ու որոշակի կանոններին ենթարկում:
- Հայ գեյերի մի մասը զբաղվում է մարմնավաճառությամբ և վճարում է ոստիկաններին:

Երգից մի հատված.

«Մենք մտանք Եվրոխորհուրդ
Հիմա մեր բաներնա բուրդ
Գեյերը հայ լեգալ
Կոմայգու դեմից վեկալ
Մարմինն են վաճառում,
Ոստիկանին վճարում
Կոմայգի մի գնա
Թե չէ, նա, նա, նա, նա»:

Հիշատակվում է 2012 թ. մայիսի 29-ի գիշերը, երբ կրակոցներ են եղել Կոմայգու մոտակայքում տրանսֆեստիտների վրա:

Ընդհանուր առմամբ, հեղինակի վերաբերմունքը հանդուրժողական է, հումանիստական:

Եզրակացություն

ԼԳԲՏ անձանց, նրանց սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վերաբերյալ հայերենում առկա եզրույթների բազմազանությունը վկայում է նրանց հանդեպ հասարակության հետաքրքրության մասին, փաստում է այն մասին, որ իրենք անտեսված չեն հայ սոցիալական իրականությունում: Իհարկե, պետք է նաև նշել այն մասին, որ եզրույթների բազմազանությունը պայմանավորված է ֆենոմենի մասին համապատասխան ինֆորմացիայի սակավությամբ ու ստեղծում որոշակի դժվարություններ կիրառման ժամանակ: Մասնավորապես, ԼԳԲՏ անձինք ՁԼՄ-ում գլխավորապես նույնացվում են արական սեռի նույնասեռականների հետ:

Էլեկտրոնային փաստաթղթերում նույնասեռականների հանդեպ վերաբերմունքը հիմնականում բացասական է, որը երևում է բացասական պիտակներից, կարծրատիպերից:

Մտահոգիչ է այն, որ համացանցային հարթությունում տարբեր աղբյուրներում հիմնականում գերակայում են զուտ գնահատողական դատողություններից կազմված հոդվածները: Ինչ վերաբերում է փաստերի վրա հիմնված նյութի առկայությանը, ապա դա բարդ խնդիր է: Ավելին, սխալ կարծիք է ձևավորվում որոշ անհատների, կազմակերպությունների կողմից, որ ԼԳԲՏ անձինք ՀՀ-ում պասիվ են: Ոչ բոլորն են պասիվ, այլ որոշ մասը բավական ակտիվ է ու ցանկացած իրավունքի խախտման դեպքում բարձրաձայնում է:

Որոշ հոդվածներից կարելի է եզրակացնել, որ կան կառույցներ, որոնք դեմ են դուրս գալիս ԼԳԲՏ անձանց: Առաջնահերթ խոսքը գնում է պետական կառույցների մասին. քաղաքապետարան, քաղաքական կուսակցություններ, ոստիկանություն, զինված ուժեր, ազատազրկման վայրեր: Սակայն կան նաև ոչ պետական կառույցներ, որոնից է Հայ Առաքելական եկեղեցին, Հայ արիական միաբանությունը: Վերջին երկու նշված կառույցները դեմ են նույնասեռականությանը և նույնասեռականներին ու դրա հետ կապված ապացույցներ են իրենց իսկ կողմից հրապարակվող հոդվածները:

Ընդ որում հատկանշական է այն հանգամանքը, որ <u>ՀՀ սահմանադրության 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք: Հոդվածի ձևակերպումը որևէ կերպ չի կանխորոշում, որ ամուսնական տարիքի հասած տղամարդը և կինը միմյանց հետ կարող են կազմել ամուսնական դաշինք: Պարզապես նշվում է, որ ամուսնական տարիքի հասնելով նրանք հնարավորություն ունեն ամուսնանալու: Բայց թե նույն սեռի հետ թե ոչ , ահա այս հարցին արդեն ՀՀ հիմնական օրենքը չի պատասխանում՝ ըստ էության հիմքեր ստեղծելով անձնական բացարձակ ինքնորոշման իրավունքի իրականացման համար: Այլ կերպ ասած ակնհայտ է, որ այս համատեքստում մենք խնդիրներ ունենք նաև իրավունքի ասպարեզում նույնպես:</u>

Քաղաքական կառույցներից մասնավորապես քաղաքական կուսակցությունների և դրանց որոշ ներկայացուցիչների դիրքորոշումը նույնասեռականների ու նույնասեռականության հանդեպ ակներև էր DIY ակումբի հրդեհումից հետո: Բայց չպետք է մոռանալ այն ուժերի մասին, որոնց դիրքորոշումը հայտնի չէ: Քաղաքական

կուսակցություններից ՀՅԴ-ն է, որ ակնհայտ կերպով հայտնում է իր դիրքորոշման մասին ի դեմս մի քանի քաղաքական գործիչների, ՀՀԿ-ից Շարմազանովն է ներկայանում և հայտնում իր, ինչպես նաև ողջ կուսակցության վերաբերմունքը: Ռաֆֆի Հովհաննիսյանը հանդես եկավ ԼԳԲՏ անձանց պաշտպանի դերում:

DIY ակումբի հրդեհման հետ կապված հատկանշական է, որ պատճառները հայտնի չեն, տարբեր կողմերի մոտ կան ենթադրություններ, սակայն հնչում են փոխադարձ մեղադրանքներ, ատելություն, թշնամանք արտահայտող կարծիքներ, այսինքն՝ կան սրված բախումային հարաբերություններ:

Ինչ վերաբերում է 2012 թվականի մշակութային բազմազանության երթին, ապա այն եղել է որակվել է որպես նույնասեռականների շքերթ:

Հարկ է նշել, որ «ոստիկաններ» վիճակագրական կատեգորիան հիմնականում բացասաբար է ընկալվում ԼԳԲՏ անձանց՝ մասնավորապես տրանսգենդերների կողմից:

Բացի այդ, դիտված հոդվածներում՝ վերաբերող մեր հետազոտության թեմային, կիրառվում են «եվրոպական արժեք», «Եվրոպա», «Եվրախորհրդի անդամ դառնալու շնորհիվ», «եվրոպական», «եվրոպական ինչ որ ազատ մտածելակերպ, բան», «եվրոպականացման միտում» բառերը և բառախումբը: Եվրոպայի հետ ասոցիացիաների ստեղծումը իհարկե պատահական չէ: Այդկերպ կարծես նույնասեռականների ի հայտ գալը և նրանց պաշտպանությունը կապվում է Եվրոպայի, Եվրոխորհրդի հետ:

Հոդվածներից մի քանիսում խոսք է գնում ԱՄՆ-ի, ՀՀ -ում ԱՄՆ դեսպանատան, ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության, ամերիկյան հատուկ ծառայությունների և ընդհանրպես օտարերկրյա հատուկ ծառայությունների մասին: Նաև հիշատակվում են այնպիսի անձանց անուններ, ինչպիսիք են Հիլարի Քլինթոնը, Բարաք Օբաման, Ջոն Հեֆֆերնը և այլն: Նման կիրառումները ևս պատահական չեն: Դա վկայում է այն մասին, որ նույնասեռականների, նույնասեռականության ի հայտ գալը, ինֆորմացիայի տարածումը կապում են ոչ թե հայաստանյան, այլ օտար պետությունների գործունեության հետ:

Առաջարկություններ

1. Հստակեցնել ԼԳԲՏ անձանց հանդեպ կիրառվող եզրույթները և տալ դրանց հստակ սահմանումները: Այնուհետև զբաղվել այդ եզրույթների ճիշտ կիրառման և բովանդակության հստակեցման ուղղությամբ տեղեկատվության տարածմամբ, որը կնպաստի ԶԼՄ-ում վերջիններիս ճիշտ, տեղին կիրառմանը:
2. Պետք է ակտիվացնել իրավապաշտպան կազմակերպությունների աշխատանքը՝ ուղղված ԼԳԲՏ համայնքի իրավունքների պաշտպանությանը:
3. Իրականացնել Շահերի պաշտպանության լայնամասշտաբ գործընթաց:
4. Առավել հաճախ էլեկտրոնային նյութերում հիշատակվում են արական սեռի նույնասեռականները, նրանց իրավունքների խախտումները, մինչդեռ իգական սեռի նույնասեռականների, նրանց մոտ առկա խնդիրների մասին հիշատակումներն առավել հազվադեպ են հանդիպում: Համապատասխանաբար, անհրաժեշտ է լուսաբանել նաև իգական սեռի ներկայացուցիչների խնդիրները:
5. Տարբեր կողմերի շրջանում հարկավոր է սերմանել հանդուրժողականություն, որը թույլ կտա ազատվել փոխադարձ պիտակավորումից: